ցում, Օրինակ՝ Գոսա կարսով մի կարմիր (ՆՄԺԱՎ, 179):

Երկու գոյականների միջև գրված գործիականը կարող է մեկնաբան-
վել մերթ մեկի, մերթ մյուսի որոշել: Օրինակ՝ Լուսին սուրբով լուս ես
(ԿԵՏ, 160):

Միջին հայերենում երբեմն արտահայտվում է զրարարում բավա-
կանին տարածված հոլովների ձգողության երևույթը, քստ որում լրացումը
զբովում է լրացչայի հոլովով, և դա մեծ մասամբ գործիականով է լինում:
Օրինակ՝ Կուր են հոգով աշօք, մտօք յիմար են, աշխմայ (ԿԵՏ, 187):

4. ԳՈՅԱԿԱՆԻ ԼՐԱՅՈՒԹՅՆԵՐԸ

ՆԱԿԵՐԱՎՈՐ ԵՎ ՆԱԿԱԵՐՈՐԹՅԱՄԲ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՈՎ

Ինչպես զրարարում է, միջին հայերենում ես բայանունները և անա-
կանական ծագմամբ գոյականները ստանում են նախդրավոր և նախա-
դրությամբ կառույցներով լրացումներ: Նախդրերը զբովում են տրա-
կան, հայացական, բացառական, գործիական հոլովների հետ: Նկատելի է,
որ նախդրերից շատ գործածվում են առ, բնդ, բառ, ի, իսկ նախա-
դրություններից՝ առանց, ի վերայ, ի մէջ:

Լրացումները նախադրայրուն և սեռական կառույցներով.— Գոյա-
կանի լրացումը դառնում են առանց, ի վերայ, ի մէջ, ի ձեռն, արտաքին,
վաճն, չափ և սեռական հոլովաճն կառույցներ: Նախադրությամբ կա-
ռույցների իմաստային հարաբերությունը լրացչայ գոյականի նկատմամբ
նույնական է բայի նույնատիպ լրացումների իմաստի հետ: Այսպես,
զարկ ի վերայ գլխոյն բառակապակցությամբ մեջ ի վերայ գլխոյն նախա-
դրությամբ կառույցով լրացումը նույն հարաբերությունն է արտահայ-
տում, ինչ զարկանել (զարկել) ի վերայ գլխոյն բայական բառակապակ-
ցությամբ մեջ:

Օրինակներ՝ Սկսան իշխանք անմիթխոր և ժանր ծնծել և վայն և հուզի
ասել, յիշելով զգեղեցիկ որդիք թագաւորին իրենաց, զմիսն ի ծառայու-
րին ի մէջ այլազգեաց (ՍՄՊՅ, 43): Գիտ նշխարաց Թաղէտսի առաքե-
լուն և Սանգիտայն կուսին ի ձեռն կրեակոսի (ՄԱՊԶ, 48): Կամ ի ալլ

սուր մազձէ է, և կամ ի գարկոց ի վերայ զվայն (ԳՔՔՄ, 98), Եւ թէ լինի ցան ի պաղտորենէ արտաբոյ մարմնոյն, եւյ պաղեցնէ զմաշկն (ԳՔՔՄ, 58): Յարուցեալ գայիս աճաղին բազմութեամբ անոց համարոյ (ՄՌՔԺ, 133):

Երբեմն նախորդութի կառուցը զրվում է ոչ բայանունների կամ անպահանական ծագմամբ գոյականների մոտ՝ որեւէ դերբայի զեղչման հետևանքով:

Օրինակներ՝ Սկիզբն զպրտութեանց հայ զոցս ի ձեռն սրբոյն Սանկայ և Սեռովպայ (ՄԱՊՁ, 47): Այնոր նման մին մ'ալ տեսայ (ԱՄՄՂ, 378): Ահա զուռն մի շափ եզին միոյ գայ յաշխարհն առ (էՄՄԳԵ, 12): Կարս մի կայր ի Մարայ յաշխարհն՝ ի շափ եզան միոյ (ՆՄԺԱՎ, 296):

Երբեմն նախադասութեան մեջ նախադրութեամբ կառուցը կարող է մեկնարանվել և՛ իբրև գոյականի, և՛ իբրև բայի լրացում:

Օրինակներ՝ Սուլթան Օսմանն պնաց ի պատերազմ ի վերայ Անիին (ՊԱԳ, 637): Մանու շափ մեղօք գործելով պնեզ խնջոտնն զՔրիստոս (ՆՄԺԱՎ, 276):

Լրացումներ նախդր+տրական, նախադրություն+տրական կառուցներով.— գոյականի լրացում դատուում են ընդ, բառ+տրական, հակառակ+տրական կառուցները, ընդ որում լրացյալը հիմնականում բայանուն է լինում:

Օրինակներ՝ Չի'նչ հազդդուրինն է լուսոյ ընդ խաարի (ՄԳԳ, 101): Ոչ յիշէր զհասուցումն ընդ զուռնոց (ՊԱԳ, 557), Ի բազում տեղոյ գրեալ է խառնակումն նոցա ընդ մարդկանց (ԱՄՄՂ, 263): Որ կամ յիցիս լսել է խառնակումն նոցա ընդ մարդկանց (ԱՄՄՂ, 263): Որ կամ յիցիս լսել է խառնակումն նոցա ընդ մարդկանց (ԱՄՄՂ, 264): Կան ի մատկիսին, որ երբ ծնանն զբուռակն, նա ի լիբ շատ ցումն ի ձեռքանն, սառ զբուռակն (ՔՁ, 51):

Լրացյալը կարող է լինել նաև ոչ բայանուն: Այս դեպքում առկա է կամ դերբայի կոճառում, կամ նախորդութի կառուցը գործածված է գոյականի մոտ սահմանափակման իմաստով, ինչպես՝ երբայր բառ մասնոյ, քոյր բառ հաւատոյ և այլն:

Օրինակներ՝ Ժողովեաց բազում ընկերս բառ նմանեաց որոյր թագաորին (ՆՄԺԱՎ, 182): Բանց զեմբանն ի եզրնկին (ՉԺ, 168): Լրացումներ նախդր+նայցական, նախադրություն+նայցական կառուցներով.— Միջին հայերենում գոյականը հաճախ լրացումներ է ստանում առ, ի, ընդ, առ ի նախդրներով և հայցականով, երբեմն և քան, որպես, իբրև նախադրություններով և հայցականով: Ընդ որում ամենից շատ այդ լրացումները զրվում են բայանունների մոտ:

Օրինակներ՝ Եւ ինն տաս դարն ի բարին, որ խառնեաց լուսանամ (ՄԳ, 263): Ազոթքն խոսք է ընդ աստուած, անտի ի հեղգար (ՉԺ, 217): Խալտար, ցնծալ, տեսանելով շատուածորդին իջումբ ի շարն (ՉԺ, 220): Մեծ բան է բժշկութիւնն ի սառնումն մարդկան (ՄԳԳ, 83): Յիր փոխումն առ Քրիստոս՝ պատմեաց զինչ գալոց էր ի վերայ աշխարհին արևելից (ՍՄՊՅ, 63): Իմացալ զգայուսա առ նա Բարդամիսն (ԱՔ, 283): Ոմանք զանկարտիւնն մարմնոյ առ ի զնալ լացին և ողբացին (ՊԱԳ, 60): Բնութեամբ ամբարցեալ է սիրտ մարդոյն ի թշնամութիւն՝ ի յառելարին ազդի առ ալզ և տահմի առ տանն և մարդոյ առ մարդ (ՆՄԺԱՎ, 42):

Երբեմն նախորդութի և նախադրութեամբ կառուցը դատուում է ոչ բայանուն լրացում՝ որեւէ դերբայի զեղչումով:

Օրինակներ՝ Շողիղէն պատկեր քան զրեք վարդի. Շրթանց համբուրից արտ արծանի (ԳԱՏ, 248): Յամենայն տեղույն նանապարն մի է ի դոխս (ՄԳԵ, 181): Միտայանաց և խոշորեմեանց զոցս թողութիւն արարէք, զի ի նանապարսի էի ի զեղ ի զիւլ (ԺԶՁԶ, 199):

Նախորդութի կառուցը գոյականի մոտ կարող է մեկնարանվել երկու ձևով: կամ իբրև բայանուն լրացում, կամ զեղչման հետևանքով զրված լրացում: Օրինակ՝ Հաստատեցին սուրբ հարքն ի սուրբ ժողովնի ի Նիկիայ, ի Կոստանդնուպոլս և յնիսեսա (ՍՄՊՅ, 127):

Լրացումներ նախդր+բացառական կառուցով.— Գոյականի լրացում դատուում են առ և զ նախդրներով և բացառականով կազմված կառուցները, ընդ որում լրացումը բայանուն է (ստացական բայերի հարաբերակից):

Օրինակներ՝ Յուսուր միում եղև ամբաստնութիւն զնման, թէ Թագաորն կուէ զբեզ (էՄՄԳԵ, 17): Տեղի տայցն շարախոսաց զմեջ (ՄԳԳ, 54):

Լրացում նախադրություն+գործիական կառուցով.— Բայանուն լրացումը կարող է արտահայտվել շափ+գործիական կառուցով: Օրինակ՝ Հաստատեալ արձանեացալ էր խաղութիւնն ի մէջ նոցա անհաշտ և արեամբ շափ առելութեամբ (ՊԱԳ, 334):

II. ԳՅՅԱԿԱՆԻ ԼԵՅՅՈՒՄԸ ԱՅՈՒԿԱՆՈՎ

Միջին հայերենում ևս գոյականի լրացման դեր կատարող անպահանքը գործածվում էին և՛ ետադաս, և՛ նախադաս: Սակայն այստեղ ավելի են նկատելի նախադաս, մասամբ և ետադաս անպահանքների՝ լրացյալին չհամաձայնակիւ երևույթները, քան գրաբարում են:

Այսպես, երբեմն ետադատ անականները համաձայնվում են թվով և հորվով:

Օրինակներ՝ Ալմմի վերայ բարձի մեծագոյն նստկիր (ՆՄԺԱՎ, 267): Այս գիշեր լեռանց բարձանց ծաղկունանց ի մէջն էի բուն (ՆԲԶ, 205): Շատ բազաւարաց մեծաց և իմաստոց արանց լսեցի (ԸԵ, 156): Անասնաց շահաւանկաց վաճառն պատե՞ն էր, որ երեք վկայից առէ լինի՞նաց շահաւանկաց (ՄԳԳ, 61): Գ. աբ կարաւր էի պան մտ առ թեզ (ՆՄԺԱՎ, 202): Երկու միթ հաց բարձր և տար կնոջ մի այրու (ն. ա., 243): Զիտը-հորքի յայտնել ասն իմաւրի է գործ (ՆՄԺԱՎ, 163): Ընդ կնոջ անգամի շատ մի խօսիս (ԿԵՏ, 216): Եւ և առակ մի այլ ասի վասն ազատայ մի անմտի (ՆՄԺԱՎ, 31):

Նստադատ անականները գործածվում են եւս ասոնց համաձայնվելու: Օրինակներ՝ Զարց շինեալ էր զամենայն Աստուածամեր բառայն Յիտայն. Այլ և խցիր հանգատարան՝ ի գալ ճիւղացն օտարական (ԺԵԶԶԳ, 299): Եւ գիս չիշման առէր արժան, Եւ իմ մեղացն թողութեան, ըստ բանին աւրումական, Եւ նրամանին անխաղաղ (ն. ա., 331): Նստա ի ճիղ մի ծառի բարձրագոյն (ՆՄԺԱՎ, 59): Տէջն յամօթով ել ի դատաւորէն անհրաւ (ն. ա., 12): Մանկայիսեր երիտասարցն բանս դատարկ աւէին (ն. ա., 172): Յաշխարհիս եմ կացել, մեղոք ցնորի, Ու զանէն եզգոր աղտաւ մնացի (ԸԵ, 184): Յիր պատկերն պատուոց փառօք լուեղէն (ն. ա., 192):

Նստադատ անականը կարող է համաձայնվել միայն թվով: Օրինակ՝ Մարդ մասկանցուս զի՞տող յայտգիսի մեկս յանդգնի վասն կենաց անցարի (ՍՄՊՅ, 32):

Զին համաձայնվում մակարայնրի համարժեք անականները (չատ, Ռիչ և այլն): Օրինակ՝ Ապուսվաց էտս գաւառ և բեզս շատ (ՍՄՊՅ, 37): Քեկ սյս գեպրում էլ կարող է համաձայնվել: Օրինակ՝ էին անդ Աստիվ շատը բնականը սակով և արծաթով (ՍՄՊՅ, 32):

Պատահում են զիւրբեր, երբ ետադատ անականը գործածվում է թեք հօղովով, սակայն չհամաձայնվելով լրացյալին:

Օրինակներ՝ Էտրկ գիտ ի ծով խուռ (ՆՄԺԱՎ, 95): Զար ծառի, Որ ոչ բրել պտղո բարի, Եւ զհանաւ շանկեպի (ԺԵԶԶԳ, 533): Պատահում է նաեւ, որ նույն լրացյալի մտ անականներից մեկը համաձայնվում է, մյուսը՝ ոչ:

Օրինակներ՝ Զօրս զուտարեաց արբի և անհամարս (ԿԳՊ, 362): Քրիտոս աստուած բողոք և բարի, Մաններ նման գիս ով կրեոջ սարք և բարս ինք հանգիպի (ԿԵՏ, 219):

Նստադատ գործածվելիս միավանկ անականները երբեմն համաձայնվում են:

Օրինակներ՝ Ի ազգմանէ շարին ստամանի սիրեաց ազգիկ մի (ՆՄԺԱՎ, 10): Այսոր տակ է մեծի ստոր կարապետին (ՆՄԺԱՎ, 87):

Սակայն միավանկ անականները նստադատ լինելիս հաճախ լրացյալի հետ չեն համաձայնվում:

Օրինակներ՝ Մեծ խնդութեամբ Լիլին ընդդէմ նոստ, և մեծ պատուով թեկալան զես (ՍՄՊՅ, 45): Մեր մարդկանց ծերութեան պատճառն այս չիբմս է (ԳԲԲԲ, 28): Էտս մեծ վէմի և Ե՛նար ի վերայ գգմին (ՆՄԺԱՎ, 9): Սովաջուս երկիրն ի շատ ջրէն (ՍՄՊՅ, 31): Յիմիկ կամ ես տարա-կուսեալ ի յիմ շար գործոցս ի վերայ (ԺԵԶԶԳ, 90): Գուհաց մեծ ձայնի, կո՞ւր (ՆՄԺԱՎ, 30):

Մրանց մի մասը բայաբմատ անականներ են, և սովորական չէ որոնց հօղովումը, ինչպիսի՞ շող, մուգ, շար և այլն:

Օրինակներ՝ Պատե՞ն է տալ մուգ ետան շուր (ՄԶՄՄ, 7): Որ շար սակով կարած իր (ՍՄՊՅ, 104): Լուս շող ջրով (ԲԶ, 154): Գու հայեր ես շար կապանի (ՆԲԶ, 46):

Օրբեմն նստադատ անականը թեք հօղովով է գրվում՝ ուղիղ մեկ սիրտարեկ: Օրինակ՝ Պատե՞ն է, որ սառին շուր տաս ի տարութեան ի ծամն (ՄԶՄՄ, 106):

Բազմավանկ անականները նստադատ գործածվելիս հիմնականում չեն համաձայնվում լրացյալի հետ:

Օրինակներ՝ Յեաղ կարմանէ ճարժմունս արձակեր (ՆՄԺԱՎ, 17): Պահեաց յԱ՛նուր գեան երկարի ամանօք իբրն լիար յորս հարիր (ՍՈՒԺ, 104): Քնեկով վճարի դատաստան իմաստուն դատաստաց ի մէջ անուղ-գայ մարդան (ՄԳԳ, 289): Քեխտուով ձուր զեղուց տուր (ՄԶՄՄ, 46): Ուսն ինչկարօրեալ ժամանակի պէտս ունի (ն. ա., 99): Եւ թէ որ վասն անեւ եկելեցայ շինման իբր տայ (ՄԳԳ, 42): Գայր անգլին գօրօք ի վե-րայ աշխարհին Հայոց (ՍՄՊՅ, 21): Արարի զսա գեղով և արձակ բար-բառով (ՄԶՄՄ, 167): Մատուակ սոկի բաժակալ մատոյց նմա գիւնի (ՆՄԺԱՎ, 208): Շատ թաղառջաց մեծաց իմաստուն արանց լսեցի (ՆԲԶ, 288): Գուցիկ անուն ծաղիկ մի կայ, որ զն է ամէն անբիշկլ ցանեուն (ՄԶԲ, 293): Սնտի իրաց ոչ հետին (ՆՄԺԱՎ, 31):

Պատահում է, որ անականը համաձայնվում է թվով: Օրինակ՝ Հրա-մայեաց բակիս գտնեալ լոյով գօրօք և այրել զամենայն շինուածս զը-տանց և գայոց յարկաց (ՊՊՎ, 61):

Որոշ երկվանկ կամ բազմավանկ անակաճանքեր նախագաս գործածվե-
լիս երբեմն համաձայնվում են լրացցալի հետ:

Օրինակներ՝ Յայն ծամ ի յազգմանէ դատաւորին Քրիստոսի խրատան
եզդիւնք (ՆՄԺԱՎ, 12); Զմեկաւորս զկաշառակերս... թողուն զնոսա (ն.
տ., 15):

Այս շրջանում գործածվում են մի շարք դուտ միջինհայերենյան
ածականներ, որոնք բնդհանրապես չեն հոլովվում, ինչպես՝ գազաուկ,
հարմաշ, այլցեղ, մազէ, շէ, Բայուկ և այլն:

Օրինակներ՝ Տկարացուցանէ զհիւանդն զերդ հալմաշ ջրմն (ՄՀՋՄ,
53); Քէ այս չէ հանցեալ, եղբար, դու ցուցու այլցեղ գիտարին (ՔԳ,
355): Միայն շէ չուկայ շրննի (ն. տ., 545): Մէկն մազէ քամ մի շունի
(ն. տ.): Քայուկ ձի հեծիս (ԱՕՔ, 382); Վրանէ Եկեղեցի և ծամահար
շրջեցուցանէ թնջ ինքեան (ՄԱՊ, 31); Ուներդ աղեղուք լարես՝ գազաուկ
նետերով դարենս (ԿԵՏ, 159):

Միջին հայերենում ես, իրենց իմաստով պայմանավորված, որոշ
ածականներ զրվում են միայն հոգեակի գոյականների մետ, ինչպես՝
յուզվ գործք, պէս պէս հետք, ցեղ ցեղ հատեր, բազում կերակուրք, ազգի
ազգի դեղք և այլն:

Օրինակներ՝ Առցէ զբերդն պէս պէս հնարիմ (ՊԱԿ, 94): Ու ցեղ
ու ցեղ հատեր խօսին (ԿԵՏ, 138); Բազում ախորժ կերակուրս և խառակիս
ուտէլիր (ՆՄԺԱՎ, 267); Ազգի ազգի դեղս առնուն (ն. տ., 290): Զայդ քո
ծով ծով աշեղզ զեղով լցես ես (ՀՔՏ, 152); Բազում ազգի ազգի խոցե
երկի ի մարդն (ԱՕՔ, 47); Զյատակս եկեղեցույ... երանց երանց վիմօք
սալարի արար (ՊԱԿ, 331):

Միջին հայերենում մի շարք բաներ համատեղում են ածականի և
գոյականի խոսքիմասային արժեքներն: Տվյալ դեպքում խոսքը վերա-
բերում է առաջին հերթին վկայական, Բերական, առիկայ, Ելուզակ, բու-
րոս, փոյր, նախագան, կոյս բառերին, որոնք որոշի պաշտոն կատա-
րելիս կատող են զիսովիւ կ' իբրև գոյականի ուղղական հոլովածներ, կ'
իբրև ածականներ:

Օրինակներ՝ Որդն քնծայի ի յականնն ի բուրբոս զիշուրննէ (ԳՔՔՄ,
92); Բացեալ տնին դունկն ականջին, Լսել զձայն փոյր պատգամին
(ԳՏՔՊ, 219); Տարա ի յԱտանոյ դեբի աղիկս հինգ հարիւր կոյս
(ՄԱՊ, 103); Կանգնեցո զինք ի գնացք ջուր (ԲԶ, 113):

Ածականի և գոյականի սեռական հոլովածների արժեքներն են համա-
անցված նաև վերի, վարի, յետի, առաջի, ներքի, գնդ, տանոյ, խաշոյ, յե-
տի, առջի, լարման, խնդման բաների մեջ որոշի պաշտոն կատարելիս:

Օրինակներ՝ Գուշակէ, որ խոցն ի վերի աղին է (ԱՕՔ, 76); Գուշակէ
որ խոցն ի վարի աղին է (ն. տ.): Ենքի բերցն ընդ այսու անուամբ
էր և հին ժամանակաւ շինեալ (ՎԱՊՏ, 118); Կողոպտեցին զաղեկն և
զգնոջ Եզեալ իւսն (ԱՄՀՄԶ, 330); Աս տանոյ կազամբ, ծծծէ ու հան
զուրս (ԲԶ, 135); Ապա տուք կերակուր խաշոյ՝ որ յուրյ մաէ լինի դու-
գած (ՄՀՋՄ, 10); Ինչ անեմ յետի խնլացս, երբ առջի անունս անքի
(ՔԳ, 10); Աշեղք է ի ծով նման, Ուներդ՝ աղեղան լարման (ԿԵՏ, 156);
Այսոր է մեջ օր խնդման (ն. տ., 157); Ասեն, թէ հեղի իշու ձու է և հանէ
հուրս (ԲԶ, 135) (ՆՄԺԱՎ, 206); Զառաջի մարդկան զցանկն՝ յետի մար-
դիկս կու բակին (ՔԳ, 278); Ուտի տերս սփռէ ի տունն (ՄՀՋՄ, 32):

Անշուշտ, բերված բոլոր ձևերը նույն արժեքը չունեն. զրանց մի մա-
սը իմաստով աղիկի շուտ ածական է (խաշոյ, տանոյ, գնոջ), մյուսները
հետագայում վերածվեցին ածականի (վերի-վերին, ներքի-ներքին, յետի-
յետին), առջի ձևն էլ առաջին զատական Բվականի խոսակցական ձևն
է Սակայն քննվող շրջանում սրանք համատեղում են ածականի և գոյա-
կանի նշանակություն:

Որոշ բուրեր էլ, գոյականի լրացման դերում, համատեղում են ածա-
կանի և մակբայի արժեքներ, ինչպես՝ հետի, վերուստ, արտաուստ,
վայրագար, տղիտարար, շատ, իշէ, հեռուստ, ակամայ, մաշգիլուհ, յա-
նայ, ստնացի և այլն:

Օրինակներ՝ Ենքն շահն իրողք ծառայիւք ի դուխս հետի լերանց
զողեւս զուղարեալ կայր (ՊԱԿ, 75); Զարտաուստ կողմանէ, տանին
բովանդակ և երեսք որմնոցն քանդեալ (ն. տ., 180); Զերմն ի վերուստ
կողմանէ ի վերայ մատարանն կատուցեալ կազմեալ էին ի տեղուք իրում
(ն. տ.): Քիչ մի ափիսն վարդի եղով տրորէ և օժէ ի գլուխսն (ԱՕՔ, 119);
Վշտանային և ցաւին հոգով շափ ընդ տղիտարար մուրուրիւնս յաշ-
տասի (ՊԱԿ, 219); Այսոր քնծային ի բարակ աղիքն լինի վասն շատ
զիշուրսանն (ԳՔՔՄ, 143); Զայս ի հեռուստ տեղ պատմէին (ԳՏՔՊ, 279):

Գոյականաբար գործածված ածականի ձևն որոշ բաներ կարող են
գիտվել և՛ իբրև գոյականի որոշիչ (ածական), և՛ իբրև աստիճան կազ-
մող բառ (մակբայ): Օրինակ՝ Անշուի հարստի գառբիկ տառպեկին ծո-
քիկն և սփեր (ՆՔԶ, 210):

Սովորաբար ածականները չեն դառնում բայական հարադրութան
անվանական բաղադրիչ լրացում: Սակայն Երբեմն հանդիպում են այդ-
պիսի գործածություններ: Օրինակ՝ Անթր ինձ ձամբեկ արար, քուխ
այնք երաց թէ՛ ցես (ՆՔԶ, 214):

Միջին հայերենում թվականները գոյականի լրացումը զգանալիս դրսևորում են որոշ անհետևողականություններ՝ զրարարի համեմատությամբ: Այսպես, նկատելի է, որ թվականներն ալիքի շատ են նախագաս գործածվում և համաձայնվում են լրացչայի հետ՝ թվով ու հորովով: Սակայն այստեղ ևս թվականի տարրեր տեսակները գործածությամբ տարբերվում են իրարից, ուստի դրանց ընտելությունը տարվում է առանձին-առանձին:

Գտնակալանք րվականները գոյականի լրացումը. — Քանակական թվականները գոյականի լրացման դերում կարող են հանդես գալ և՛ նախագաս, և՛ հտագաս, երբեմն եզակի գոյականի, երբեմն հոգնակի գոյականի հետ, երբեմն համաձայնվելով, մեծ մասամբ շամաձայնվելով: Այսպես, մի քանակական թվականը (որը հանդես է գալիս նաև մէկ, մին ձևերով) հաճախ գործածվում է նախագաս՝ շամաձայնվելով լրացչային, ընդ որում գոյականը լինում է և՛ եզակի, և՛ հոգնակի:

Օրինակներ՝ Այն ինթն՝ որ բորբոսի, յինին ի մէկ տեղաց, այլ ժողովն ի մէկ տեղի (ՄՀՋՄ, 59): Ի մէկ օրն սպանին զերկուսն (ՍՊՊՑ, 124): Բազում մարդիկ գնացին, և մին մարդն արգիլեցաւ (ՆՄԺԱՎ, 233): Թէ մէկ ատու ճանապարհ՝ երթայ, դարձնալ դառնայ և գայ (ն. տ., 119): Երկու եղբայր ի հոն կային՝ մի մէկ հօրէ, մօրէ, եղբայր (ՉԳ, 474): Թագաւորն արժամայն ևս նոցա երկոցունցն մէկ մի սարօքն հեծնելոյ (ՆՄԺԱՎ, 247):

Պատահում են դեպքեր, երբ նախագաս գործածվելով մի թվականը համաձայնվում է լրացչային:

Օրինակներ՝ Ոչ գտաւ միոյ զգնեկանի էշ (ՆՄԺԱՎ, 105): Որք միով այժիկն կամ րանկոճաւ շատանան (ՊԱԼ, 42):

Նուազաս գործածվելիս մի թվականը կարող է և շամաձայնվել: Օրինակներ՝ Գնացար հաշու մի ճանապարհ (էՀՄԳԱ, 53): Ես տեսայ մարդ մին ի բշչկաց (ՄՀՋՄ, 126):

Պատահում է նաև համաձայնություն՝ ետագաս գործածվելիս:

Օրինակներ՝ Գիւղական ոմն անցանէր իշով միով ի փողոցէ իմեքէ (ԱՄՀՄՁ, 326): Էր ի քաղաքի միում այր ոմն վաճառական (էՀՄԳԱ, 313):

Միջին հայերենում մէկ ձևի գործածական զգանալու շնորհիվ հաճախ մի ձևը գործածվում է անորոշ դերանվան իմաստով:

Օրինակներ՝ Քանի ամ գնացեալ կար ինձ մեկ հօրեղբորորդի մի

(ՆՄԺԱՎ, 181): Գի՛ մի արածէր օշխար ի գաշտի մի (ն. տ., 209): Այր մի անէր բարկացող և անզգամ կին մի յեղուանի (ն. տ., 133):

Երբեմն էլ միասին գործածվում են մին, մի ձևերը նույն իմաստով: Օրինակ՝ Մին ամիս օրդ փոշի տեղեաց թիզ մի (ՄԱՊՁ, 47):

Երկու, երեք, չորս թվականները գործածվում են և՛ նախագաս, և՛ հտագաս՝ ալիքի թիշ համաձայնվելով լրացչայի հետ, ընդ որում գործածվում են և՛ երկու, և՛ երկուս ձևերով:

Այսպես, հետևյալ նախագասություններում նախագաս դիրքում այդ թվականները շարի միավոր եզակի գոյականի հետ են գործածված՝ ստանց համաձայնվելու:

Որք երեք օր անցանի (ՄՀՋՄ, 38): Յեա երկու ատուոյ զդոցար զՊոսկանա (ՍՊՊՑ, 115): Յեա երեք ատուոյ դարձաւ յաշխարհն Յունաց (ն. տ., 21): Ան հոտոմ մասնեհար կաւ երեք դրամ (ՄՀՋՄ, 50): Բայց թէ ի գարկոց ժամն չմոնի, ու երկու օր անցնի, ևս այլ սուպանց յատյ (ՍՊԳ, 66): Քեռքիւն տալու չորս եզանական է (ԱՌԲ, 84): Գնեաց չորս հոգի կերակուր (էՀՄԳԱ, 49): Երեկոց շամբր զՊագասա ի վերայ Տիգրիս զետոյ չորս ատու ճանապարհան հեռի ի Բարխիւնէ (ԿԳՊՁ, 74): Աեղիս քնկն ո՞նց պահեմ, մէկս հող, մէկս հողի է (ՆԲՁԿ, 290): Յորժամ յարութիւն լինի, փողն երկու ձայնիս օր գոչէ (ն. տ., 306): Ես ար չէին երկու փողու (ՀԲՏ, 181): Ու այդ երեք անտանէղ զմարդն ճանաչես (ՀԵ, 190):

Նույն թվականները նախագաս են գործածված հոգնակի գոյականների հետ՝ դարձյալ առանց համաձայնվելու, հետևյալ նախագասություններում: Անտանց չորքտանեաց վաճառ զմասե՛ է, որ երեք վիպից առէ լինի հաստատած (ՍԳԳ, 61): Երկու դրեթնալէնք միրանանէ նոր շինեցան (ՊԱԳ, 318): Շաղգած ևս ի չորս իւրց, այլցնը շէքց ամօր չի լինի (ՀԵ, 148): Ես այս լինի վասն երեք պատեառանաց (ՄՀՋՄ, 59): Արդ արձան է յատոջ գիտենալ դորբոսիլն զչորս երկրեոյն (ն. տ., 62): Մնաց երկու կողմանց մարդ մի կենդանի (ՆՄԺԱՎ, 299): Կապեալ էր ի Չորս կողմանց զճանապարհոս (ՄԺՁ, 454):

Սակայն այս թվականները կարող են գործածվել նաև համաձայնվելով լրացչայի հետ:

Օրինակներ՝ Չկարէ որ երկուց տնանց ծառայել (ՍԳԳ, 23): Շատք մեռան յերկուց կողմանց (ՍՊՊՑ, 114): Եթող երկուս օրցիս յԱլլթանայ նաթուն կնոջէ իրմէ (ՄԱՊ, 19): Երկուսն ի շորից երկրիցն, կամ երեքն բորբոսին (ՄՀՋՄ, 102): Յեա երկի ամաց անցիկոց դարձեալ կէն Մաթարն

(ՄՊՊ, 6): Պատմեցին զայն զատարերն զբանս երկի եղբարցն (ՆՄԺԱՎ, 203):

Այս դեպքում հնարավոր է, որ Թվականը հոգեակի գրվի եզակի գոյականի հետ: Օրինակ՝ Պերկուս բնկեր ս՛նց պահան, մէկս հոգ, մէկս հոգ է (ՆՔԶ, 290):

Թվականը հոգեակի ձևով է գրվում նաև ետադաս լինելիս: Օրինակ՝ Թէ խօսես քաղցր և անոջ քան մի երկուս լինը խրատով (ԿՅՏ, 170):

Հինգ և երանից բարձր բանականան Թվականները լրացյալ գոյականի հետ գործածվում են ակնի շատ նախադաս, ընդ որում մեծ ժառանգոր տասնց համաձայնվելու: Լրացյալը հիմնականում շարի միավոր է լինում:

Օրինակներ՝ Տուր ինձ մալ տասն տարույ (ՄՊՊ, 21): Զիտն սկոտայնոյ համարն քառասուն ու չորս ակոյայէ (ՔԶ, 54): Առիկ սկոային... նա դոտերն է և բուսի ի ծննդեկնէլ ի վեր և ի հինգ ատուրն (ՔԶ, 54): Մնայն բեզ վարդի՛ գնչոյ հազար զանկալեի (ՄԳԱ, ծր): Մէկին հազար զանոյ մաբի (ՅԳ, 535): Իւր նուպոյ քան գտասուեիլու պահ ալլ ակնի բաշէ (ՄՀՋՄ, 94): Տասն հազար ստակ պարտի ինձ (ՆՄԺԱՎ, 220): Թափած է ի րո վերայ վարդաջուր հազար փիլայլ (ՆՔԶ, 125):

Նույն Թվականները կարող են երբևէն նախադաս գործածվել նաև հոգեակի գոյականի հետ՝ տասնց համաձայնվելու:

Օրինակներ՝ Ես երբ մեզետասան ամաց էի մանուկ տղայ (ԿՅՏ, 188): Զազար զէնաց խոցնն (ն. տ., 183): Զուր ի վիմէն ձեզ բխեաց, երկուսասան վտակաց (ԶԵ, 244):

Այս Թվականները գործածվում են նաև ետադաս եզակի կամ հոգեակի գոյականի հետ՝ համաձայնվելով կամ՝ ոչ:

Օրինակներ՝ Ես զպտուղ և զործեաց զարդարարիւն երեսուն, վարսուն և հարիւր (ՆՄԺԱՎ, 219): Կալան զԳեմեկոյան, և իշխանն քառասուն (ՄՊՊ, 12): Տարցնն տա խաչարուն Զայրց Աչրու... ձապա երկու հազար, ձի տասն հազար, և չորի հազար (ն. տ., 17): Ձեռ զէջն հարիւր հազար՝ աղտորին շարին է պատրան (ՆՔԶ, 87): Նա ես նմա ձիարուս հինգ հազար (ՄՊՊ, 38):

Միջին հայերենում ես քանական Թվականները կրկնաթյամբ արտահայտում են բաշխական իմաստ:

Օրինակներ՝ Առ... եշտատակ հինգ հինգ դրամ (ՄՊՊ, 50): Ամէն մէկնս մէկ մէկ հաց էր զդիկէլ (ՆՄԺԱՎ, 203): Ինքն ժողովեաց մէկ մէկ սակի (ՄԺ, 2, 417): Ի սոյն ամի Իսմայլի փաշայն տասն տասն խտուշ խորաջ կառ (ՄԺ, 2, 418):

Դասական բվականները գոյականի լրացում.— Միջին հայերենում գոտանան Թվականները սովորաբար գոյականի լրացում են զանոնում նախադաս գործածությամբ, ընդ որում լրացյալը հիմնականում եզակի է լինում, և Թվականը չի համաձայնվում լրացյալի հետ:

Օրինակներ՝ Այն առաջի ցեղ հայութաշն է զոր Թառամեցեոզ ասեն (ՄՀՋՄ, 38): Ի շրտում օրն լուծումն լինայ... փորուն... և է-ում օրն փարաթի ցան (ԱՕԲ, 291): Քանի է առաջին մարդոյն ի ձեռն պատկին կապեալ (ՆՄԺԱՎ, 242): Յորժամ երկուսում օրն եզև, հեծալ Թաքաւորն ի ձի (էՀՄԳԱ, 51): Բնական սաստային սասածումն ոճով ի քառասնե-բարդ երկրորդ զույսն գտանեն (ՄՀՋՄ, 123):

Դասական Թվականները կարող են գործածվել նաև հոգեակի գոյականների հետ: Օրինակ՝ Յամանայն կողմանց նմանել էր առաջին սրբոց քազաւորացն (ՄՈՌԺ, 212):

Դասական Թվականները հազվադեպ գործածվում են ետադաս՝ չհամաձայնվելով լրացյալի հետ: Օրինակ՝ Ինք ժամանեաց հարցն առաջին (ՆՔՔ, 35):

Անճեւրական բվականները գոյականի լրացում.— Թվականի այս տեսակը միջին հայերենում թիչ է գործածվում: Եղածներն էլ փոքր Թվականներից կազմվող ձևեր են (երկուին, երկուհան, երեկին, երեհան և այլն): Սրանք նախ զանում են հատկացուցիչ: Օրինակ՝ Գրեաց ի վերայ զերկացունց անուանն (ՄՊՊ, 104):

Որոշի գերում սրանք հիմնականում նախադաս են գործածվում՝ համաձայնվելով հոգեակի լրացյալի հետ:

Օրինակներ՝ Գրեցին առ նա երկուին կարողիլաւն նամակ ողոր-նի և սիրոյ (ՊԱԳ, 11): Բազումք զոն ի ստա յերկոսին կողմանս յայսպիտում ժամանակի սրբ դանանցողք հողով էլուզակք (ՊԱԳ, 38): Ես զոն կենդանի էին երեկին եղբարէն (ՄՊՊ, 75):

Երբևէն Թվականը լրացյալից տարբեր հորովով է գրվում: Օրինակ՝ Ի շորեսին կողմանցն յօրինեաց գալիս (ՍՊՅՆՍ, 322):

IV. ԳՈՅԱԿԱՆԻ ԼՐԱՅՈՒՄՆԵՐԸ ԳԵՐԱՆՈՒՆԵՆԵՐՈՎ

Միջին հայերենում գոյականի լրացում են զանում բոլոր տեսակի դերանունները: Գրաբարի համեմատությամբ փոփոխվել են որոշ դերանունների գործածության առանձնահատկությունները, առաջ են եկել նոր դերանուններ (հանշախ, հայրեցեղ, այսինչ, հանց և այլն):

Անձնական դերանունները գոյականի լրացում.— Անձնական դերանունները գոյականի լրացումը դասուում են բոլոր հոլովներիով: Սակայն բառակազմակցությունների բնութագրի ժամանակ կանոններ միայն սեռական հոլովածիների վրա, քանի որ մյուս հոլովածիները բացառապես զեր են կառուցում, իսկ այս դուրս է բառակազմակցություններից:

Գոյականի լրացումը դասուում են ես, դու, նա, ինձ, իր անձնական դերանունների սեռական հոլովածիները՝ իմաստային այն բոլոր հարաբերություններով, որոնք բնորոշ են գոյականի համապատասխան հոլովին: Քանի որ վերջիններս հանդամաներն են իր սեղանը, այստեղ գրանցվել են անդրադասուում:

Անձնական դերանունները գործածվում են և՛ հտազաս, և՛ նախադաս (գրաբարում անավելյապես հտազաս գործածություն ունեն): Այսպես, հետևյալ նախադասություններում անձնական դերանունները նախադաս են:

Իր ամէն բոլոր ձնեղեմներն մահու մեռաւ (ՀԵ, 216): Մինչդեռ հիւսնեղե աղէկ ունեա զիր խելոն, ես կոչէ զիր ծանօթներն և զնոմիկոսն (ՄԳԳ, 65): Ասցի թէ զասուամ յիմ շատ շար գործոյն, որ ես արարի (ՅԳ, 364): Ի վաս բազկէ չէ մեռնալ Գո օրդին (ՊԱԼ, 88): Իր սուայի սասաճումն այն է, որ սար հանդերձով զմարմինն աղէկ ծածկէ (ՄՀՋՄ, 11): Իմաստուն մարդն ու սար կամար է ամպէ: Ար յիւր քաղցր անձրեկն յերկիրն ես ցօղէ (ՀԵ, 187): Ի թուին ԱԳԹ դարձալ առ իմ կարայն Հեթումն մազատրն (ՄՄՊՅ, 125): Քն ծոցդ է դրսիս, մրդաց անդատան (ՀԹՏ, 153):

Այս դերանունները ափելի շատ գործածվում են հտազաս: Օրինակներ՝ Ալեանք իմ ունիմ զասն և տխուր (ՅԳ, 487): Ի բազում տեղիս զրեայ է խառնակումն լոցա ընդ մարդկանց (ԱՄՄԶ, 263): Անիմք հասաւ և յոյս ի զիտութիւն Աստուծոյ և յազօթս ի բարեխօսութիւն ծառայից ետա (ՄԱՊ, 56): Մեծաց շարժօքն իւր սաղկապի (ԱԲ, 174): Ցածօթ եզի կաշտոս դաստասն ետա (ՆՄԺԱՎ, 254): Շատ ոսկի զեկան ծրարեայ ունիս ի Կարձղ Գո (ԷՀՄԳԱ, 212): Ահա մատակին Գո և բանալի երկաթի կապանաց (Ն. Թ., 229): Փայլէր իրրե զարեզակն սարը հոգի վազապստն մեր Վանականն յերկիրն արեկեան (ՄԱՊ, 12):

Իր դերանունը երբեմն գործածվում է նաև իրեն ձևով Օրինակ՝ Ասաց զիւրն աղատարեան պատճառն (ՆՄԺԱՎ, 221):

Փոխադարձ դերանունները գոյականի լրացում.— Սրանք գասուում են հատկացուցիչ:

Օրինակներ՝ Լուծան ի միաբանութենէ միմեանց (ՄՄՊՅ, 37): Ապաշաւէին զմիմեանց կարուսա (Ն. Թ.): Ապա թէ համախոհ բցեն միմեանց կարուք կամ օրդի՛ կորիցեն (ՄԳԳ, 314): Վասն որք կուրին և զիրեաց մարտիմ փեակն (Ն. Թ., 318): Թէպէտ ծանր էին միմեանց խնդիրք, անյապաղ իրաքանչիւրք կատարէին (ԱՄՄԶ, 225):

Ցուցական դերանունները գոյականի լրացում.— Միջին հայերենում գրաբարյան ցուցական դերանուններից զատ գործածվում են նաև նոր ստաբացած իտայ, այսինչ, այսցեղ, այլցեղ, այլցեղ, հայցեղ, հանչալ և այլ դերանուններ:

Աս, դա, նա ցուցականների սեռական հոլովածիները հատկացուցիչ պաշտոն են կատարում՝ շտարբերվելով անձնական դերանունների սեռական հոլովածներից՝ իմաստային հարաբերություններով և գործածության առանձնահատկություններով: Այսպես, դրանք գործածվում են հտազաս հետևյալ նախադասություններում:

Այն որ հնազանդի գրոյ սորա (ՄՈՒԹ, 162): Թէ ձայն սորա քաղցր լիքի (ՆՄԺԱՎ, 31): Նա միայն կարող է... լնուլ և կատարել զպակասութիւն անդամոց դոցա (Ն. Թ., 32): Այն ի մահն նմ և ոչ ի կեանքն ի ննաղ սորա (Ն. Թ., 57):

Նույն դերանունները կարող են գործածվել նաև նախադաս: Օրինակներ՝ Ի սորա հայապետին աղչե աանին խաչ (ՄՄՊՅ, 126): Այն թէ զիս ի նորա տեղին հանէք (ՆՄԺԱՎ, 8):

Իտայ, ինա դերանունները գոյականի որոշիչ են գասուում մեծ մասամբ նախադաս գործածություններ:

Օրինակներ՝ Կալ զիտայ հայրենիս ու սար ինձ զիտայ շալ զեկանս (ՄԳԳ, 65): Մինչ այնպիսի շարչարեն, որ ինս հասա վիզն բարակին (ՆՄԺԱՎ, 322):

Այս, այդ, այն, այն, զայն, նոյն ցուցական դերանունները սեռական հոլովով կարող են գասուլ հատկացուցիչ՝ շտարբերվելով նույն պաշտոնը կատարող անձնական և սա, դա, նա ցուցականներից: Այս դեպքում դրանք կարող են գործածվել և՛ նախադաս, և՛ հտազաս:

Հետևյալ նախադասություններում այդ դերանունները նախադաս հատկացուցիչ են:

Ի զուտուշ նազոս դրամ սորին արեկասաուրացն էա (ՊԱԳ, 317): Բայցում դեա՛հարք ետին աղօրիմ ազատեցն (Ն. Թ., 321): Յայսոս պատարեզին առաջն տանին գաւաղան (ՄՄՊՅ, 126): Սյնոր պատանալն բորբոս մաղձերն են (ԳԹՐՄ, 127): Բայց այրեցման վզենն ու սուղանքն այնոր է, որ պատճառ լինի այրեցման, և յայսոր վերայ երթայ

այսպիսեաց իրանին (ՄԳԳ, 63): Եւ սոցին ամենեցուն առիք, ոչ այլ ինչ, եթէ ոչ Հեռացումն ի սուրբ գրոց և յերկիզէն Աստուծոյ (ՊԱԳ, 290): Այսոր նշանն ի ցաւածէն հասկնաս (ԳՔՔՄ, 93): Յասոր վերայ երթայ այսպիսեաց իրաններն (ՄԳԳ, 63): Այսոր պատմութիւնն այս է. որ շատ քան լինի (ԱՕՔ, 145): Այսպիկ իրաւունքն չիւր գրան եպիսկոպոսացն վերայ բաժանեացի (ՄԳԳ, 300):

Նույն գերանունները կարող են դառնայ նաև ետագաս հատկացուցիչ՝ Օրինակներ՝ Մաղեց յոյն շնորհաց ի սխեա նորին (ԱՔ, 251): Քրիստոս ոչ կամի զհակառակութիւն և զընդդիմութիւն հաւատացելոց իւրոց, այլ զսէր և զմիարեւութիւն նոցին (ՆՄԺԱՎ, 172): Յոյժ հանեցաւ թագաւոր ի բան ծերուն և զովնց զսակց պատասխանատուրիւն նորին (ն. ա., 331): Ոչ որ կարէ գիտել զգործս նորին (ՀՄԲԲ, 355):

Այս գերանունները գոյականի լրացում են գառնում նաև որոշական հարաբերութեամբ: Սակայն սրանք կապակցութեամբ նույն կանոնները չունեն, ուստի և ներկայացնում ենք առանձին-առանձին:

Այս, այդ, այն գերանունները գոյականի հետ գործածվում են նախադաս, և՛ ետադաս երկու դեպքում էլ նրանք կարող են համաձայնիվ կամ ոչ: Այսպես, հետևյալ նախադասութիւններում գրանք նախադաս չհամաձայնիվող որոշիչ են:

Յայս ամի մեռու թագաւորն Ռամասոս (ՍՄՊՅ, 39): Յայն ամի մեռու թագաւորն Գաւթի (ն. ա.): Վասն այդ պատճառաւանց չէքի շուտ (ՄՀՋՄ, 57): Որ կան յարեւել և են բարեկամք և յոյժ սիրող այս բարաւորսրեանս (ՄԱՊ, 45): Աստուծոյ շրաման չկայ այդ ցաւացող բռնիկի (ԿԳՊ, 309): Այն ահեղ Բարկոծին նա ա՛նց համբերէր (ՖԳ, 246): Մի գարմանսր այս բանեայս (ն. ա., 330): Ի յայն զնվերայն՝ որ խանս տախտախն զրեցար... ի բան տաք (ՄՀՋՄ, 111): Որ զուրբ լինին այն տեղայն շինտեանս (ՄԳԳ, 73): Այն պարսիկ շունն զնաց զտուր զնա (ՆՄԺԱՎ, 275): Հազար երեսնի այս աստա, որ մէկտեղ ենք մենք ժողովի (ՆՔԶ, 253): Շատ էր յայդ ծովեր յատր, յաջացար ու այլ լիս երեւր (ն. ա., 297): Այս խնայցս այսպէս վայելէ ինն (ՆՄԺԱՎ, 112): ԿՔնց սակաւիկ մեղր և տարաւ այն աշխարհիկ թագաւորին (ն. ա., 298):

Նույն գերանունները կարող են դառնայ նաև նախադաս համաձայնիվող որոշիչ:

Օրինակներ՝ Վասն այդ պատճառաւանց յիշեցար (ՄՀՋՄ, 76): Յայս ամի յգիսց լուսն (ՍՄՊՅ, 98): Ներքի բերդն բնդ այսաւ տնումբ էր (ՎԱՊՅ, 118): Այնու բուովն դիւրեաւ բաժանեմք յրերեսց (ՊԱԳ, 433):

Երբմն այս գերանունները միայն հոլովով են համաձայնվում: Օրինակներ՝ Նորս այսու բարի գործով յերկինս վերացան (ՀՆ, 201): Այսու կերպարանոք յապարանս մտայ (ԱՔ, 277): Չնոյն գրեայն նույին շարապրութեամբ արդէն աստ պծագրեցի այսմ պատճառաւանց վասն (ՊԱԳ, 561): Անորէն եպիսկոպոսն ոչ յտուացաւ այնու շարեօք (ՍՄՊՅ, 22): Եւ ես կամ ի մէջ այդու շիրարկութեանց (ԱՍՄՄ, 279):

Նույն գերանունները լինում են նաև ետադաս որոշիչ՝ համաձայնիվ կամ՝ ոչ:

Օրինակներ՝ Հանգրեւս այս յոյժ արզելումն տայ ընթանալ յերկինս (ՆՄԺԱՎ, 291): Էր բագաւորս այս՝ քաջ, բարետեսիկ և ա՛նարկու (ՍՄՊՅ, 1): Էր յաւորսն յայն մեռարայոյիտ մի ի Կեսարիա՝ Մարկոս անուն (ն. ա., 66): Մերս այս ի գանձէն յայնմանէ իմոյ շինեաց զայս ամենայն (ՀՄԳԱ, 144): Բանիս այսուիկ իմաստունն միսիթալեաց զայնն (ՆՄԺԱՎ, 230): Հլիսանգս սա յանալու է (ն. ա., 295): Զհետ մտար զուստ և խարող կենաց աշխարհիս այսուիկ (ն. ա., 106): Յաւորս այսուիկ երևեցաւ աստղ մի գիսաւոր (ՄԱՊ, 8): Հանդիպեցաւ նոցա բզտապան դասաւորին այնմիկ (ն. ա., 202): Մարդիկ սակաւ պահեն զորէնս, որպէս մարդիկքն այնմիկ, որք ոչ կարէին ելանել բնդ սխուն (ն. ա., 226):

Սույն, զոյն, նոյն ցուցական գերանունները գոյականի լրացում են գառնում նախադաս՝ երբմն չհամաձայնիվելով:

Օրինակներ՝ Եկեալ բանեկեանս ի նոյն տեղացն (ՍՄՊՅ, 43): Ի սոյն ամի մարտեանս Յոյնք ի գառնէն (ն. ա., 98): Ի նոյն ամի յարեաւ ի վերայ նորս Մանիակն (ն. ա., 44):

Երբմն էլ գրանորում են շեղում գրաբարչան ձևից:

Օրինակներ՝ Զինուորն՝ որ էամ զվարդապետն, ի նայեամ ասուրն յանգիման կոցոյց զնա խանին (ՊԱԳ, 278): Ահա առիթ սոյնոյ իրավութեան (ԱՍՄՄ, 296):

Այս գերանունները նաև կարող են նախադաս կիրառութեամբ համաձայնիվ լրացույի հետ:

Օրինակներ՝ Գո՛ւ առ կաթուրիկս տէր Սարգիս և առ թագաւորն Յովանէս վասն զմին իրի (ՍՄՊՅ, 25): Նորին Յոնանէնիսի վարդապետի եզնիկացոյ սասցեակ (ՀԵ, 183):

Այսպիսի, այլպիսի, այնպիսի գերանունները անաչին հերթին կարող են որպիս հատկացուցիչ գործածվել:

Օրինակներ՝ Պարս է զայսպիսայս արիւնն հեղել (ԿԵՏ, 183): Այնպիսույ աչլե կորսանայ (ՀՄԲԲ, 543):

Այսպիսի, այդպիսի, այնպիսի, հոյնպիսի ցուցական զերանունները սովորաբար նախադաս որոշիչ են դառնում՝ առանց համաձայնվելու:

Օրինակներ՝ Այսպիսի դարձանակամ Հակոտակոյն գուրճահամ (ՄՏՄՁ, 197); Այնպիսի տեղուչ միով բարի բաւականացում (ԱՄՂՁ, 315); Ափսոս չէ՞, որ քո պիտի հարկետր մարդն չեն այնպիսի անբախտ մարդոյն շրջի (ՆՄԺԱՎ, 246); Այնպիսի աղողորով արժատուօք լայնի (ՄԱՊ, 43); Տիրան ստէ զնա, յետոյ և սպան և սպան զնա, այսպիսի պարճանաւ (ԳՊՊՁ, 21); Հրաժարեաց ի յայնպիսի սնկիսէն և լրճրեղնացն (ՆՄԺԱՎ, 182); Ցայնմամ երեք կերպ կրնի չորն, որ է ամօթն, բարձաւ յայնպիսի կնոջն (ն. տ., 243); Այսպիսի բանի բժշկեաց զգուտարն թագաորին (ն. տ., 135); Այսպիսի երեսիս այսպիսի հայելի պլտի (ն. տ., 196):

Այսուհանդերձ, այնքան, այնքան, այսչափ, այդչափ, այնչափ, սայնզուհակ, այնցեղ, հայնցեղ, հանչափ, հանց, այսինչ, ասանկ ցուցական դերանունները սովորաբար գործածվում են որպէս նախադաս որոշիչ՝ չհամաձայնվելով լրացչաների հետ:

Օրինակներ՝ Ինքն հայնցեղ սմանկ մեռնի, զիտ այն աղայն (ՄԳԳ, 70); Իմաստնոյ այսչափ խրատա հերթի է ուսեողին (ԱՌԲ, 19); Զայս յարճս ստոր հանց մարդոյ, որ յտակ սեանսէ (ՎԱՊՏ, 206); Դու այսչափն մարդ ես և այսինչ ատոր կեկալ բերի (էՄԳԱ, 38); Ի սուղ ժամանակի բուն այցեան հաստարկն բարկեամս կարացնոր ունի (ԱՄՂՄՁ, 294); Այս չափ պարանաց և բաւեաց տէր կարք (ՆՄԺԱՎ, 160); Զարմանք և հիացումն է, թէ այնչափ պարտականի բունն ոնց կու տանի (ԽԳ, 280); Մաղզած ես ի չորս իրաց, այնցեղ շէնկղ ամուր չի լինի (ՀԵ, 148); Լանց մարդ, որ, նայ, ունի կամ սուման կամ ի բնութենէ, Համեմէ Հոգոյ մարդկան (ՔԳ, 520); Եկի առի հանց կրակի՝ ոչ գրէի, աչ կարգայի (ՀՏՔ, 226); Լանցեղ նետով դիս խոցեցեր, Որ այլ չունիմ բժշկարար (ն. տ., 159); Թէ չէ գտանկ այլ սէր՝ չուն ու գայն, աղոթես այլ ունի (ՆՔԶ, 219); Լեցկուն հարկիքի բերեմ, որ ամէն ի բն յմանի (ն. տ., 90); Ի հոնց տեղաց հոտ սանոս նա, որ թէ մէկ ատոր ճանապարհ երթայ, դարձեալ դանայ և գայ (ՆՄԺԱՎ, 119); Լանց բան ստէ, որ հասանիմ (ն. տ., 167):

Այնպէս, այսպէս դերանունները եւ կարող են նախադաս որոշիչ լինել:

Օրինակներ՝ Ո՞վ է տեսնը այնպէս խեղճ բան (ԺԵՁՁԳ, 22); Ծառ պատահին այսպէս բանի, որ այք կերիցեն զգանձա այլոց (ՆՄԺԱՎ, 125):

Անորոշ դերանուններ՝ գոյականի լրացում.— Միջին հայերենում եւ անորոշ դերանունները գոյականի լրացում են դառնում երկու ձևով: Առաջին դեպքում դասնց սեռական հոլովը հատկացուցչի պաշտան է կատարում:

Օրինակներ՝ Եթէ որ զունկ իբ հարամ ուտէ, նա թող չորս կրկին վճարէ (ՄԳԳ, 72); Զայլոց մեղք զու մի բններ, գրոյն յերակ մտօրք անգիճէ (ՀԵ, 145); Ուտէ ձրի զայլոց վատասն (ՆՄԺԱՎ, 23); Զայլոց պարտան վճարեմ (ն. տ., 248); Զայլոց մեղքն առաջի ակն է ի վերայ կրծոյն և օտին (ն. տ., 152); Զի՛նչ շահ է իմ զատիւ, երբ այլոց ի ծոց ես պապած (ՆՔԶ, 217); Այք կերիցեն զգանձա այլոց (ՆՄԺԱՎ, 125);

Մյուս դեպքում անորոշ դերանունները գառնում են գոյականի որոշիչ լրացում:

Ամէ, ոք դերանունները որոշիչ են լինում անձ ցույց տվող գոյականների մաս նառաջա զործածվելով սովորաբար անփոփոխ ձևով:

Օրինակներ՝ Եւ թէ ձառայ ոք ի տանկաց փախչի նա մի մասունք դինք (ՄԳԳ, 66); Մանուկ ոմն աննէր գողօթին փոքր (ՆՄԺԱՎ, 15); Գայ այլ ոմն իր ճանապարհան (ն. տ., 125); Թագաւորն ոմն կազմեաց պորաց իւրոց ճաշ (ն. տ., 128):

Այս դերանունները կարող են երբեմն գառնալ նաև նախադաս համաձայնվող որոշիչ:

Օրինակներ՝ Բ զինուորք յով նախանձաւոր էին բնց միմեանս և էին ծառայո ոմնմն կապաւորի (ՆՄԺԱՎ, 260); Թագաւոր մի բարկացա ոմնմն իշխանի (ն. տ., 275); Տար զհացո այլ ոմնմն աղատի (ն. տ., 244):

Ոմն դերանունը կարող է նաև նախադաս զործածվել՝ անփոփոխ ձևով:

Օրինակներ՝ Գտին զունկ կապաւոր (էՄԳԱ, 86); Եկն ոմն իմաստուն բմիչ (ՆՄԺԱՎ, 273):

Այլ միւս դերանունները ավելի հաճախ զործածվում են նախադաս՝ բոլոր գոյականների հետ՝ չհամաձայնվելով լրացչային:

Օրինակներ՝ Ապա այն զերմն՝ որ յայլ նիւրեոյն ի բորբոսեոյն լինի, բաժանին բնց երկու ցեղ (ՄՂՁՄ, 58); Որ չունի զուղաւորութիւն հետ այլ անզամոցն (ԳՔԲՄ, 51); Բայց աղունի վատութեան պատճառն էլ պիտի տեսնուի վասն զիճութեան ցորենին և այլ իրաց (ՄԳԳ, 81); Ունէի և այլ պատանոս հարկաւոր զպարտան իմոյ (ԿԳՊՁ, 282); Կարան գողացու զձու միւս կախաին (ՆՄԺԱՎ, 47); Եկեալ զորաց իշխանն առ միւս աղաւանից պահապան և խարկաց (ն. տ., 1); Յիշեցր զհայրն

իմ... և գալլ արեան մեծաւորս մեր (ԺԳՉԶ, 498): Չթողում, որ այլ գալլի գրան ձեզ նեղացնեն (ՆՄԺԱՎ, 45): Ի միս ասուրն եկին ի գաւառասան (ն. տ., 253): Յառաջն զիս այլ մարդոյ տվել էին (ն. տ., 204): Վարեաց ի դեան, զի առջէ զհացն ի միւս շահնէ (ն. տ., 203): Ես երթամ և մտանեմ այլ քաղաւորի գրաւար (ն. տ., 134):

Պատահում են զեպրիք, երբ այս զերանունները զրվում են թեր հոլովներով, իսկ լրացայնները՝ ուղիք:

Օրինակներ՝ Ուղարկեաց զեա յայլում քաղաւոր (ՆՄԺԱՎ, 141): Ետան յայլում մարդ (ն. տ.):

Այս զիցրում հնարավոր է նաև զերանվան սխալ ձևի գործածութեամբ: Օրինակ՝ Գու ս՛վ էս, որ դառնա գալլում ծառայ (ՆՄԺԱՎ, 265):

Նախագաս լինելիս այս զերանունները նաև համաձայնվում են լրացայնի հետ:

Օրինակներ՝ Այլոք ճեարիւմ հաստատեաց Աստուած զսիրտ իմ զարհուրել (ԳԳՉԶ, 282): Մուշեղ Մամիկոնեան և Սամսէլ յայլով արատօքն Լալոց կոտորեցան յատր գատկացն լիամէլէլացոց (ն. տ., 68): Եւ զարձեալ ի միտում ամին, եկն ի վերայ աշխարհին Լալոց (ԱՄՄՄԶ, 229): Միս այլք բնակիչի սնապատին ամենեքեան ժողովեալք էին ի լեան (ՊԱԳ, 265):

Իմն, ինչ զերանունները գործածվում են որպէս ետագաս համաձայնովոր որոշիչ:

Օրինակներ՝ Գիւզական ոմն անցանէր իշով միով ի փողոցէ իմնէլէ (ԱՄՄՄԶ, 326): Անդ ի զիպառածէ իմնէլէ բարերարախոյի յեւո՛ր՝ թագաւորեաց յայլոյնի պատճառաւ (ԳԳՉԶ, 47): Վասն յանցանաց իւրի սպանար (ն. տ., 338):

Կարող են նաև անփոփոխ ձևով գործածվել:

Օրինակներ՝ Եւ անցին ասուր ինչ (ՆՄԺԱՎ, 22): Երևեցաւ աստղ մի զիտարս ասուր ինչ (ՄԱՊ, 8): Էսա պիտի ամանով ինչ և զնաց ընդդեմ Տաթարին (ն. տ., 24): Յեա ասուրց ինչ զնաց զորք թուրքին (ն. տ., 40): Գապանք և երար ամենայն ի մի ժողովեցան վասն խնդրոյ ինչ իրաց (ՆՄԺԱՎ, 83):

Միջին հայերենում հանդիս են գալիս այլցեղ (այլ ցեղ), մկկալլ (մկկ այլ) անորոշ զերանունները, որոնք սովորաբար նախագաս են գործածվում և հիմնականում զրվում շարահարկական ինքնուրույն զեր շունչով զգոյականների մոտ:

Օրինակներ՝ Այս շերմանա տէրն պատե՛հ է որ ի բաղանացն յոյն այլ ասուր յամէլ քան զմկկալլ ցեղ շերմանա տէրն որ ի ցրտոյ եղաւ

(ՄՂՋՄ, 13): Թող օր մի, և մկկալլ օրն յուս թիզ ջրով (ԲԶ, 154): Ինքն լինի պատճառ բազում և այլ ցեղ հիւանդութեանց (ՄՂՋՄ, 2): Ինքն էսա զմկկալլ երբայնք պարտն Թորոս զտեր Պապանունին (ն. տ., 118): Չնդանով և այլ ցեղ շարաշարանօք տանդեն (ՄԳԳ, 35): Եւ այն մկկ այլ մարդոն հայրն այն զորականի հայրն սպանեալ էր (ՆՄԺԱՎ, 126): Ի մարզիկ տարր ու պագիկ անուշոյր, զուզ անէր մկկալլ զիչերուն (ՆԲԶԿ, 116): Վաղն ու մկկալլ օրն, ասեմ, քո սուրաթն ի յիս նմանի (ն. տ., 279):

Միջին հայերենում գործածական է նաև մկկ ֆանի (մի ֆանի, ֆանի մի) անորոշ զերանունը, որը սովորաբար զրվում է եղակի գոյականից առաջ, երբմն և հետո, ընդ որում լրացայնը մեծ մասամբ շարահարկական ինքնուրույն զեր շունի:

Օրինակներ՝ Թպտիրն այն է, որ մկկ ֆանի օր յառաջ սերկիկի շարապ իսնա (ԱՌԲ, 66): Մկկ ֆանի ձեա սաքթայ լուծէ (ն. տ., 121): Լուպ մի ֆանի տարր (ՄՂՋՄ, 106): Ջերմանն նոպայն օր մի ֆանի միացեալ զադարի (ն. տ., 139): Բայց կամիմ էս խօսիլ քանիկ մի ֆանի (Նն, 184): Կարինն այլ ի ձեւերն ասեր՝ կու ստեղծէր սուրաք մի ֆանի (ՆԲԶԿ, 279):

Մուշեղ զերունունները զոյակակի լրացում.— Մրանք ևս ասաչին հերթին կարող են դառնալ հատկացոյցի:

Օրինակներ՝ Եկեալ յետոյ ճայն և յամենեցուն փետրէն ասեալ՝ զանձամբն շարեալ և զարդարեալ (ՆՄԺԱՎ, 36): Ես քեզ խրատ մի ասմ, որ յամենեցուն պարտուցն ազատես (ն. տ., 248): Ատակոս ցուցանէ զբազաւորն ամենեցուն աստուած (ն. տ., 286): Թագաւորն ամենայնի էսեւս զբանդն լցեալ (ՆՄԺԱՎ, 1):

Երկրորդ զիցրում որոշույլ զերանունները գործածվում են որպէս զոյակակի որոշիչ:

Ամենայն զերանունը սովորաբար զստեմ է նախագաս որոշիչ եղակի կամ հոգնակի զոյակակի մոտ՝ առանց համաձայնելու:

Օրինակներ՝ Առաք... զամենայն բերգս և զվաղաքս ծովեկերովն (ՍՄՊՅ, 17): Ջերմն քան զամենայն ցեղ հիւանդութիւն ի մարզիկ շատ հասնի (ՄՂՋՄ, 2): Չկալ քան զքեզ լեզի, Ի՛ր ամենայն լեզոյ լեզի էս (ՉԹՏ, 173):

Երբմն այս զերանվան կրկնավոր ձևն է նախորդաւ որոշիչ զգոյնում եղակի զոյակակի՝ հետո Օրինակ՝ էշն ամենայն զամենայն զօրաբնայն իւրով իբրով կերտս և՛հան և և՛հար զիբրան զալուն (ՆՄԺԱՎ, 56):

Ամենայն զերանունը կարող է դառնալ նաև ետագաս որոշիչ: Օրինակներ՝ Միեշև առ հասարակ երկիրս ամենայն արևելք և արե-

մուտք, ի յահէն զարհուրեալ յլստուած ապաւինեցան (ՄԱՊ, 22): Ժոզովէր ինքեան զգօս ածնեայն Միչերկրեայ գաւառայ (ՊԱԺ, 74): Հեղձուցի զայն զամենայն (ՆՄԺԱՎ, 41):

Ամէն զերանունը ևս կարող է գտնուի նախագաս շամաձայնիդոյ որոշիչ եղակի կամ հոգնակի զոյականի մաս:

Օրինակներ՝ Ար լինի իր ամէն մարմինն սպիտակ (ՄՀՏՄ, 57): Ամէն քաղցր իրժամեն լիզրին զէն անէ, և ամէն լիզի իրժիմ գտաձորն վատուցեն (ԱՌՔ, 65): Ամէն ծածուկ ստի նա տեսանող է (ԳԱՍ, 229): Զամէն ազգի սրունետօր պատուցէր (ՍԳԳ, 19): Նա պեղծ է և ազահոյիկն և պատճառ ամէն շարեաց (ն. տ., 69): Գու ևս ազրիւր կենդանոյիկն և փարատիչ ամէն ցափ (ՔԲ, 334): Զմիտրն մարուք պահէ և յամէն մեղաց հոսանայ (ն. տ., 351): Զամէն հայ քրիստոնէկն ի մէկ տեղի պիտի ժողովեն և ապանեն (ԺԿԶԶ, 275): Գա զամէն աշխարհիս կկան է հասուցեալ (ՆՄԺԱՎ, 237):

Երբեմն ամէն զերանունը նազառ է գործածվում: Օրինակներ՝ Կոպն ամէնն ցափ (ԱՌՔ, 126): Մաղկունեղ ամէն ժողովեցան (ԿԵՏ, 155): Զլարկամա ևս ի յիս ունիմ, որ զղոտիս զամէն կու քակէ (ՀԵ, 162):

Ամէն զերանունը գործածվում է նաև շարահյուսական պաշտոն շունեցոյ բառերի հետ: Օրինակ՝ Ամէն զեղ հով իրաց պահէ զբեղ (ԱՌՔ, 302):

Պատահում են նաև ամէն զերանվան նախագաս համաձայնութեան զեղբար: Օրինակ՝ Յամէն կողմանէ քարչելով՝ զգա շարժել անհնարին է (ՆՄԺԱՎ, 171):

Բոլոր զկրանունը գործածվում է նախագաս կամ նտաղաս՝ մերթ շամաձայնիվելով, մերթ շամաձայնիվելով լրացչայի հետ:

Օրինակներ՝ Եր ամէն բոլոր ծնելիամբրէն մահու մեռու (ՀԵ, 211): Բոլորով ստաի իրեանց խնդրեն զնա (ՍԳԳ, 15): Պատնէչ ածուլ շուրջակցիկն նստան ի վերայ բոլոր բանակով ամօր և ամօր (ՍՊՊՆՍ, 404): Եկաց անդ ամ մի բոլոր (ՊԱԺ, 334): Բոլոր գիշերն զգեղն բոլոր պահէր ի գուցանայ (ՆՄԺԱՎ, 9):

Ամենեման զերանունը գործածվում է զոյականների հետ՝ որպէս հասակացոցի:

Օրինակներ՝ Օրհենն զատուածն ամենեցուն (ԿԵՏ, 136): Յամենեցուն պատուցեալ ապառաիս (ՆՄԺԱՎ, 248): Ամենեցուն զլոպն այս է, զոր ինզրեմ ի բնն (ն. տ., 250): Այսպէս անոնս զու ամենեցուն դատաւատան

(ԱՍԶՄԶ, 300): Ամենեցուն հոգին հասար միայպէս կոյ անեն (ՆՄԺԱՎ, 187):

Այս զերանունը կարող է գտնուի նաև նախագաս որոշիչ: Օրինակներ՝ Բայց յամենեցունց կողմանց քարչելին (ՆՄԺԱՎ, 171): Զամենեանց զքրիստոնէայի կողոպուտ արարին (ԺԿԶԶ, 324):

Ամենեման որոշչալ զերանունը գործածվում է նաև նտաղաս՝ հոգնակի զոյականի հետ: Այս զեղբարմ զերանունը կարող է զիտվիլ և՛ իրրի զոյականի լրացում (որոշիչ), և՛ իրրի նրա հետ նախագատութեան բաղադրյալ տեղում:

Օրինակներ՝ Միս այլ բնակիլ անապատին ամենեման ժողովեալ էին ի լեսոն (ՊԱԺ, 265): Մանմտակամն ամենեման Քողզն կեղան և զղբտան... Եւ զան ուտեն զհէրիսան (ՀՀՄՔՔ, 493): Մարդիկ ամենեման իսպառ ատեցին զիս (ՄՈՒԺ, 385):

Իւրամանչիւր զերանունը սովորաբար գործածվում է նախագաս և՛ կեղակի, և՛ հոգնակի զոյականների հետ՝ առանց շամաձայնիլիւս: Օրինակներ՝ Յիւրամանչիւր տեղաց առաքեցին ղիտղթիս վկայականս (ՊԱԺ, 199): Հարցանէր իւրամանչիւր կալունաւորաց ուրոյն՝ զայանցանս իւրեանց (ԱՍԶՄԶ, 232):

Հարգական-հաւարեական զերանունները զոյականի լրացում. — Մրանք ևս ստացին հերթին զանունն են հասկացոցիչ:

Օրինակներ՝ Գուր լսէր, թէ յամ անց է զորսար (ՆՄԺԱՎ, 8): Զօրն պատաներ եմ, զորն կերեր եմ, զորոյ զմակն եմ քաշեր, զորոյ զառնեմ եմ կերեր (ՆՄԺԱՎ, 44): Տես, թէ որո սրին անուշ է (ն. տ., 316): Նուիրեցին նման ակն մի պատուական, որոյ յատկութիւնն էր այս (ն. տ., 329):

Երկրորդ զեղբարմ այս զերանունները գտնում են որոշիչ՝ գործածվելով նախագաս՝ մեծ մասամբ շամաձայնիվելով լրացչայի հետ:

Օրինակներ՝ Մտիկ զու ծառին արա, թէ րանի՝ հունար կայ ի նա (ՀԵ, 194): Ընդ ո՞ր մեղաց արարիք, Զայս փոխարեն հասուցիք (ն. տ., 243): Վայ ինձ, թէ որպիսի գարշելի ծայնի կամէիր կատարել զտոն մեծ կարագետին Յովանու (ՆՄԺԱՎ, 87): Այս ի՞նչ կենդանի էր (ն. տ., 316): Ի՞նչ կենդանի է մարդն (ն. տ., 113): Ռոպ շափով շափես՝ նոյնովն բեղ կամին շափել (ԿԵՏ, 179): Աշխարհս ինչ աղէկ որ կայ, նա աշերուս բեւրիմ ցրցենմ (ՆՔԶ, 155): Ի՞նչ մայր է զբեղ բերեր, ի՞նչ զայնակ զբեղ սնուցեր (ն. տ., 74): Եւ ո՞ր լեզու կարէ պատմել զխեղճ մեռանել տղայոցն (ԺԵԶԶ, 437):

Այս զերանունները կարող են զրգիլ շափի միավոր զոյականների

հետ՝ միասնաբար շարահյուսական դեր կատարելով: Օրինակ՝ Գրեռն պարտ էր ինձ, թէ քանի լիար զիեի տանէր նայ (ՆՄԺԱՎ, 48):

Ստացական դերանունները գոյականի լրացման դերում ստացական դերանունները կատարում են հասկացուցչի պաշտոնը: Իմ, Դո, իւր, մեր, ձեր դերանունները միջին հայերենում հաստատարպես դործածվում են կ՝ նախդաս, կ՝ նտագրաս՝ համաձայնվելով լրացյալի հետ:

Օրինակներ՝ Թողութիւն յանգանաց իմոց հայցեցէք (Ըն, 198): Ծացէ Աստուած բազառիցն մերոյ և թագուհոյն ժամանակս բազումս (ՄԱՊՅ, 124): Ուսոյ հիանդութեան քում զեղ (ՆՄԺԱՎ, 115): Նա գիտէ զօրտես աննաց մերոց (Ն. ա., 107): Կիև ոմն մեծատուն և զեղեցիկ յգոցա յանէ իւրմէ (Ն. ա., 260): Մի պակասեցէ լում ծառայութեան ի պատանոց ձերմէ հանապաղ (ՄԱՊՅ, 63):

Անկազկան գոյականների մոտ ստացականը կարող է եզակի թվով գործածվել: Օրինակ՝ Քանզի խօսից բոյին փափազէ հոգես (ՀՀՄԲՔ, 354):

Երբեմն ստացական դերանունը կարող է նտագրաս կամ նախագրաս գործածվելիս համաձայնվել լրացյալին: Այն դեպքում այն անձնականին է նմանվում:

Օրինակներ՝ Տիրեաց հայրենեաց իւր (ՄԱՊՅ, 105): Չթագուհին իւր ձեռովն ձեռնեց իմսն (Ն. ա., 105):

Պատահում են դեպքեր, երբ ստացական դերանունը անհամաձայն է մեծով գործիական հոլովով գրած գոյականի հետ:

Օրինակներ՝ Այդ քոյո կամա արասցես (ՀՀՄԳԱ, 223): Ետ փոխան հայրենեաց իմոց զՀրաշխարհոց իւր կերպս (ՍՕՊՅՍ, 360):

Զափածո խոսքում շատ է հանդիպում հանգավորման նպատակով ստացական դերանունին թեք հոլովածին գործածություն ուղիղ ձևի փոխարեն: Օրինակ՝ Ար զհեղաբար քալարս քային նշանակեր լամս վերջին (ՆԵՔԶ, 49):

Պատահում են նաև ոչ ճիշտ համաձայնություն դեպքեր: Օրինակ՝ Ի ամանն թշնամի և կողոպտիչ կար ի կողմս մերում (ՄԺ, 2, 453):

Ժխտական դերանունները գոյականի լրացում.— Միջին հայերենի հաստակարգում հանդես են գալիս ոչինչ, ոչ ոք, ոչ ով ժխտական դերանունները, որոնք գործածվում են նաև գոյականի լրացման դերում: Մերանք ես ստաբիլ հերթին կարող են դառնալ հատկացուցիչ: Օրինակ՝ Զայե որ ոչում աչք չէ տեսել (ՀՀՄԲՔ, 180):

Մրանցից ոչինչ դերանունը կարող է նախագրաս որոշիչ դառնալ գոյականի մոտ:

Օրինակներ՝ Գու ալդպէս ոչինչ ընկերոջ հետ ինչո՞ւ շուրջ կու գաս (ՀՀՄԳԱ, 44): Իսկ բաղարթութեան մեղքին՝ ոչինչ կենցաղս է (ԱԲ, 268): Ամէն ոչինչը դատարկ բանի Անդէն համար ունիս տալու (ՀԹՏ, 138): Այնչի որո՞ք ոչ յաղենային (ՄԱՊ, 23):

V. ԳՈՅԱԿԱՆԻ ԼՐԱՏՈՒՄՆԵՐԸ ԳԵՐԱՍԵՆՔՈՎ

Միջին հայերենում գոյականի լրացումը դառնում են անորոշ, անցյալ, ենթականական, ինչպես և դերբայական իմաստ ու կիրառություն ստացած հարակառար դերբայները: Գրանցից անորոշի սեռական հոլով բուն կիրառությունները: Գրանցի սեռական հոլովածները փոխանվանաբար են դառնում հատկացուցիչ: Նշված դերբայները կատարում են նաև որոշիչ պաշտոն:

Անորոշ դերբայը գոյականի լրացում.— Անորոշ դերբայի սեռական հոլովը առաջին հերթին դառնում է հատկացուցիչ՝ դրվելով նախագրաս կամ նտագրաս:

Օրինակներ՝ Չեղծելոյ հնար իսկ չկայ (ԳԱՏ, 203): Չունիմ կենայտ հարակ, Չէ հնար ումէք կայ աստէն, Չունիմ զնայու պաշար նեղ ու նարբ ճանգիտն հրեղէն (ԽԿ, 143): Ապա զկատանն ս՞վ լուծէր, երբ չկայր մեզ ելելիլու յոյս (Ըն, 153): Լուսն ձայն աշտային խնայալոյ (ՆՄԺԱՎ, 23): Ապա թէ չկայ հար լուծումն անկելոյ, տար մուլ նոսն չար (ՄՀՀՄ, 56): Ապա թէ կարիք չէ զմարմինն սրբելոյ (Ն. ա., 41): Ցայտած լուսին նոցա եղիցի թեզ պատնաս զնայոյ ի վերայ նոցա (ՊԱԿ, 113): Բայց ծամանակ զայլ նորա մերձեալ է (ԽԿ, 134): Թագաւորն հարցաներ զպատնաս չտալոյն (ՄՈՒԺ, 106):

Անորոշ դերբայը դառնում է նաև որոշիչ, ընդ որում երկու ձևով: Առաջին դեպքում այն հանդես է գալիս սեռական հոլովով և արտաբոստ նման է հատկացուցչին: Այսպես, հետևյալ նախագրասություններում անորոշ դերբայը նախագրաս որոշիչ է:

Չձենելոյնն ձի այն է, որ լինի շորս սոցեսն հաստատուն (ՔԶ, 80): Թէ անբժշկելի լինի զաղին և ուսելոյ անատուն լինի, նա զղինն տայ ու զանատունն չիեք անուն (ՄԳԳ, 80): Սրտիկս է լալու տղայ, շարբարով կու խազուեցնեն (ՆՔԶ, 123):

Անորոշ զերբայք կարող է դառնալ նաև ետադաս որոշիչ: Օրինակ՝
Ոչ վաղը եմ ի վար գալու, ոչ օտար ծաղիկ զնալու (ՆՔԶԿ, 123):

Քիչ չեն այն զեպքերը, երբ անորոշ զերբայի սեռականը ետադաս,
երբեմն էլ նախադաս կիրառուելու կարող է մեկնարանվել և՛ իբրև
որոշիչ, և՛ իբրև հատկացուցիչ:

Օրինակներ՝ Ես ունի շատ բան հոգալու (ՀՔՏ, 137): Ես մնացի իսկ
կայելու (Ն. տ., 148): Ի սերմանելոյ ժամն կու լինի այսցեղ հանդիպած
(ՖԳ, 368): Ոսկով հանդերև ես հագել ի հրապարակ պարծնելոյ (ՖԳ,
306): Այլ ոչ եզրեա հնար զերծանելոյ (ՆՄԺԱՎ, 324): Ու ետևպարեմ
կայր ինձ գնալու ու միտքս հանգչել ոչ (ԺՆԶԶԱ, 658):

Երբեմն էլ սեռական հորովածքը կարող է մեկնարանվել և՛ իբրև
գոյականի, և՛ իբրև բայի լրացում:

Օրինակներ՝ Չի գտնու հնար զեծմանլուն (ԽԳ, 146): Այլ ճար շու-
նիքը աստ կենալու, փող չի մնաց հացի տալու (ԱՄՄՂ, 114): Երբ հրա-
ման ուղեցար զնալոյ՝ այլ կոչեաց զմեզ և խօսեցաւ (ՎԱՊՏ, 208): Տուր
ստանալոյ դուրս խոտ (ԲԶ, 147): Քիչ դու ունիս սիրտ խրատի՝ բնզ լսելոյ
սականջ սիրի (ՅԳ, 191): Խմելոյ մուղ նսան չուր տուր (ՄԶԶՄ, 42):

Երկրորդ զեպքում անորոշ զերբայք գոյականի որոշիչ է դառնում
անփոփոխ ձևով, ընդ որում այն ստվորաբար լրացալից հետո է զրվում:
Օրինակներ՝ Ինձ յոյս և նորակ շիայ ելանել ուստի ես անկայ (ԳԱՄԺ,
104): Ազգի փռանցաց ոչինչ ունէիև հոգս շփարանալ ընդ Հայք (ՄՈՒԺ,
287): Ես այլ ոչ եր շունին իշխանորին ծայխել կամ գրանել գոտար ուն-
տարանն ի լիւրցոց, կամ յօտարաց, կամ զեղացի (ԺԳԶԶ, 546):

Անորոշ զերբայի անփոփոխ ձևը նույնպես կարող է մեկնարանվել
և՛ իբրև որոշիչ, և՛ իբրև հատկացուցիչ:

Օրինակներ՝ Պաղտօթնեն՝ շունի կարիս շատ հովուքին առնողն
և ոչ աշխատել թորին (ԳԲԲՄ, 3): Այս է ժամանակ բնդուներույ և առեղ
պսակ ի Քրիստոսէ (ՄՈՒԺ, 291):

Այս ձևը կարող է երբեմն մեկնարանվել և՛ իբրև գոյականի, և՛ իբրև
բայի լրացում:

Օրինակներ՝ Քարոզի ունկն դնել առի ես հրաման (ԱԲ, 202): Ապա
թէ շունենայ կամք մեղաւորն դառնալ ի մեկաց, նա աստուած դարձու-
ցանել զերեսի ի մեղաւորէն (ՆՄԺԱՎ, 81): Ես ձուկ զրի ոտով նմա (Ն.
տ., 181):

Անցյալ զերբայք գոյականի լրացում.— Այս զերբայք կարող է դառ-
նալ հատկացուցիչ և որոշիչ: Հատկացուցիչ դառնում է լրացալի զեզու-
ման հետևանքով:

Օրինակներ՝ Մի ժլատանայ՝ տալ գտառիկաց վառն կամ զվար-
տելոց լրատմէն (ՄԳԿ, 75): Աբբէք դուք յարենէ հաստացելոց (ՊԱԼ,
74): Բազում մարդիկ ունին զնև հաստացելոց, այլ ոչ ճշմարիտ հաստան
(ՆՄԺԱՎ, 286): Զնեա մանչոցն կու տեսնեն (Ն. տ., 5):

Անցյալ զերբայք որոշիչ է լինում և՛ ետադաս, և՛ նախադաս, ընդ
որում ետադաս լինելիս այն համաձայնիվում է լրացալի հետ:
Օրինակներ՝ Ոչ որ ի մեծամեծացն ի վեհագունեից կարող եղն տրել
բռնութեամբ Կապախե օրենելոյ ի Տեսնել (ՄՈՒԺ, 373): Ցեա երից
ամաց անցելոց դարձեալ էին Տաթարն (ՄԱՊ, 6):

Անցյալ զերբայք կարող է նաև լինել ետադաս շամաձայնիվող որո-
շիչ: Օրինակներ՝ Եղն արգի մի թագաւորին նորամեկալս (ՆՄԺԱՎ, 227):
Տեսանեն սուրբք զմեղաւորէն տանելալ (Ն. տ., 21): Քամին է յօգնու-
թիւն և բորբոքէ զհուս վառել (ԿԵՏ, 182):

Անցյալ զերբայք կարող է դառնալ նաև նախադաս որոշիչ՝ հիմնա-
կանում շամաձայնիվող լրացալի հետ:

Օրինակներ՝ Գային ստուգք պարտուցն և խորդէին զիւրեանց տանալ
պարտան (ՊԱԿ, 8): Կարուսալ պատկերին թէ չէր զնացել (ՖԳ, 245):
Բապիին ի նմանէ նեացեալ փնտուրէն (ՆՄԺԱՎ, 80): Ետ հազար խա-
տացեալ զանկանան (Ն. տ., 224): Զամենայն բոնն ծանուութեան բառ-
նայ ի վերայ մեացեալ մարմնոյն (Ն. տ., 326): Քանի զիմ այրեցել
սիրես արեման (ՀՔՏ, 151): Ոմանք շար ես հեա ինձ ու նախանեով են
լիմ վերայ, վանն իմ զեւալ բանիս (ԿԵՏ, 187):

Նախադասութեան մեջ գոյականից հետո զրվող անցյալ զերբայք
կարող է զիտվել և՛ իբրև որոշիչ, և՛ իբրև պարագայ: Օրինակ՝ Ուրախու-
ցել են մեծ սազով՝ ծրք որ տեսան զվարդն բազմել (ԿԵՏ, 121):

Ներակալական զերբայք գոյականի լրացում.— Այս զերբայք գոյա-
կանի լրացում է դառնում նաև գոյականաբար գործածվելով՝ կատարե-
լով հատկացուցիչ պաշտոն:

Օրինակներ՝ Ունկամք ոչ լսողի բիկունէն օտցէ զան (ԱՄՄՂ, 144):
Նշանակել առակու, թէ անբան թշուոնք զմեղաց փոխարէն հաստացանեն
և բանական մարդիկն ճեղաց բարոյն շար հաստացանեն (ՆՄԺԱՎ, 229):
Ով ոք զմեղաց անէմն անու (Ն. տ., 295):

Ով ոք զմեղաց անէմն անու է նաև որոշիչ՝ ետադաս կամ
ենթակայական զերբայք դառնում է նաև որոշիչ՝ ետադաս կամ
նախադաս: Ետադաս որոշիչը կարող է համաձայնիվել որոշալի հետ:
Օրինակներ՝ Բազումք գրն ի սոսս լերկոսին լայսպիսում ժամանա-
կի արք դառնացողք հոգով կուրզակք (ՊԱԿ, 38): Պատասխանեալ է վե-

գիրն արանցն մատուցանողաց արդարին (ն. տ., 244): նա ի բազմութենէ արանցն հաց զնողացն մտացազ զստաշին մարդոյն (ՆՄԺԱՎ, 322):

Ետագաս որոշիչը կարող է նաև շամաձայնովը լրացալի հետ, մանավանդ արժեքով լինելիս: Օրինակ՝ Որք մանկունք էք, աղայք, ուսման ցանկացող, նշիրուք աստուծոյ ու մարդկան սիրող (ՀԵ, 185):

Ենթակալական զերբայը հաճախ դառնում է նախադաս շամաձայնովոց որոշիչ:

Օրինակներ՝ Ետա ջանի քակեալ հանին յաշխարհէն Հայոց զյաղրող քաղաքուն (ՍՄՊՅ, 58): Ի յայս չիքմանս ի ղեզերն՝ խառնես զպարկնացնող և զկարող ղեզերն (ՄՀՋՄ, 200): Թէ որ իր ձեռնադրող եկիսկապուսին հակառակի... նա նզովի է (ՄԳԳ, 39): Երևէ զայս կապկապող ղեզերս (ԲԶ, 131): Ի շնացող ձեռէ և առաջնորդէ փայտի (ՆՄԺԱՎ, 60): Սպասէր ղիպող ժամա՛ւ առնէ շար քործոց նորս փոխարէն (ՍՄՊՅ, 67): Եկի ի դուն սնուցող անտա՛ն իրոյն (ՆՄԺԱՎ, 12): Հանապաղ լսե՛ծք և հասանե՛ժք ստա և խորոզ բանիցն ստանանայի (ն. տ., 29):

Հարակատար զերբայը գոյականի լրացում.— Միջին հայերենի բաձայական հարաջուցում երևան է գոյին հարակատար զերբայը՝ զբարբարյան —աձ վերջածանց ունեցող բայանունների զարգացման հիման վրա: Այս զերբայը հիմնականում գոյականի որոշիչ է լինում մեծ մասամբ ևսագաս կիրառութեամբ:

Օրինակներ՝ Առ...սերկելիլի կուտ յխտկած, զդմի հունդ յխտկած (ՄՀՋՄ, 43): Վարդն փռէ տերէ շարս (ԿԾՏ, 150): Ունէր ի շալակն մեծ ջուպ մի լցած (ՆՄԺԱՎ, 286): Եուն մի տոված եկի առ Թաղատարն (ն. տ., 208): Առ ղեղին հայիլը աղցած և մաղած նրկու նուկի (ՄՀՋՄ, 100): Եուն եմ առ դուրս քո Բաղցած, Չեմ ի խնդիր զհաց մանկանց (ՀԵ, 177): Ամէկերն են ղիկէ ծառ ծաղկած (ՖԴ, 520): Չունի՛ս դու հաշիւ գրած հանց ուղորդ, որ ստա զու մինեակ (ն. տ., 368): Երակին մարմինն պիկոց լինի՛ որդէս զար Բայած (ՄՀՋՄ, 39): Ունէր Գ որդի կարգած (ՆՄԺԱՎ, 191):

Հարակատար զերբայը դառնում է նաև նախադաս որոշիչ:

Օրինակներ՝ Բորբասած աղին շատ լինի (ՄՀՋՄ, 58): Բեր զայն մարդոյ բերած իլոն (ՆՄԺԱՎ, 253): Նա ղիր հին հանշած սխռոս ունեայ (ՍԳԳ, 73): Առ... եկիւմ Բուտրի ջուր՝ Թուղթ մի (ԲԶ, 123): Գանգատ ու զրկած մարդիկ անձարակ են առ ձեզ եկել (ՀԵ, 147): Թագաւորն ուղարկեաց նոցա խորոված ուլ մի (ՆՄԺԱՎ, 200): Գու Թաղիս ի վիմէ փորած ապղանի (ն. տ., 447): Նոր պղակած հուրս ու փեսան ի մէկ մէկէ բաժանեցան (ԺԵԶԶԳ, 22):

Սրբեմն հարակատար զերբայը կարող է մեկնարանվել և՛ իբրև գոյականի, և՛ բայի լրացում:

Օրինակներ՝ Սուրաթ լուսեղէն լուս ես, Լուսին բլուրած կենես (ԿԾՏ, 159): Պարոնի մի ձորտն հարբած իր պարոնին շատ գէշ սասց (ՆՄԺԱՎ, 313): Վարդն բացում մի սիրեր, որ գա ի ծոցոց Թառամի (նԲԶԳ, 50):

VI. ԳՈՅԱԿԱՆԻ ԼՐԱՅՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Միջին հայերենում մակրայը դառնում է բայանուն և ածականակա՛ն ձագմանը գոյականի լրացում:

Օրինակներ՝ Ապա զհնա նորա զնոյն այսա պխտացալ նորին անուանակրն Փոկսա (ՊԱՆ, 33): Ինքն զմահու ցալ շերտնի (Ն. տ., 39): Գազանք արիւնս կշաացան ու թաղանք ի լաշիս վրայ (ՀՔՏ, 217): Հիանգացալ զցալ մահուն (ՆՄԺԱՎ, 139): Քրտամբք կերակրիլ զնաց հրամայեաց (ՀԵ, 193):

Միջին իմաստը կարող է համատեղվել ձևի իմաստին:

Օրինակներ՝ Ուրախացան ուրախութիւն մեծ (ՆՄԺԱՎ, 41): Եղբունս զինչ երգում որ կայ, որ քան զքեզ սղկ մի չի կար (ՆՔԸԿ, 191): Ակիլ զինք գարի (ՔԸ, 68): Զերկրին հողն ճրլուն շինեն եւ մարգարտի զին կու ծայսն (ՀԸՄՔՔ, 481): Անձնք կարմիր զոյն ներկեցալ (ՀՔՏ, 198):

3. Հանգումն անուղղակի խնդիր.— Այսպիսի լրացում պահանջում են սովորաբար այլ ձևերով նույնիմաստ լրացում ստացող բայեր:

Օրինակներ՝ Տիշեցեր ի Քրիստոսս զվատանցնց հայտն, որ մասունկից եղաւ զվահկայ անասունս, որ զերի էր բերած անօրէնքն ի հուլիթի (ԺԳԸԸ, 30): Տային փաստ աստուծոյ, որ բարի ժամանակ նստան (ՆՄԺԱՎ, 43): Նա զարկէր զայս կողս, զայն կողն (Ն. տ., 113): Զուրբ Քրիստափոր յաջորդ տէր Ղևնից ամս երկու (ՎԱՊՏ, 80): Ասաց ամբօսանս, թէ շանց ժամանակ հասաւ, որ ոչ զդորդն կու տակ, զնախանս կու պատահն (ՆՄԺԱՎ, 149): Թէ զու սիրիւտ խնձոր, նա այլ իմ աշխ մի երեւոր (ՆՔԸԿ, 153): Քույրս այլ երամ խառնիմ, զաս ի հետ ճանչել, թէ կարնս (Ն. տ., 149): Երբ կին տեսնէմ, ցանկանամ, զժօրոց զուսն տեսնալ (Ն. տ., 278): Այս ազգ միտ, որ վխալոցն ձի է, նա սղկ է, զի բնզինայ մարցն (ՔԸ, 74): Թէ թէ զնզիկ զարկել ցարքն, որ իցուն ի քիսնց, զու գիտացիր, որ զրատն մահու է (Ն. տ., 103): Թէ զիտ՞րդ մի ու երեք զաստուած հաստան (ՀԵ, 189):

Նրբեմն հայցականը կարելի է մեկնարանել և՛ հանգման, և՛ տեղի իմաստով:

Օրինակներ՝ Քույրս այլուն ծարսօր Գաշեր, էր քաթրիկից կէր յօրինաց (ՆՔԸԿ, 111): Է՞ր հանցիկալս իս այս շարիս (ՄԸՔ, 119): Գարէ հատկի նզակմիջեռ է կպեալ (ՆՄԺԱՎ, 23):

4. Առողջական անուղղակի խնդիր հայցական.— Սա զտարաբան ի, բնզ + հայցական կառույցի արտացոլումն է:

Օրինակներ՝ Նշան ցորեկկուրիս այն է, որ արեւն շկարէ հայնի (ԱՕՔ, 220): Տանկարծակի շուրբ նայեցեալ եւ ի դնացից զինքն սղկեալ (ՆՄԺԱՎ, 209): Մէկոյն այլ աշխարհ նայիմ, այլն ամէնն այլ ի զկ ի բնզ (ՆՔԸԿ, 106): Լօր քո տեալ եմ կարօտել (ՆՔԸԿ, 176): Արեկ, զգեբիս նայլ (Ն. տ., 162): Զաղկին, որ ի դեալ տեսնու, բեր աչեր, որ զինք

չի հայի (ն. տ., 61); Կինն աղօթից փափաղել չէ, Զագգականն կարօտեր է (ՀՔՏ, 189); Զիրեանց ծանիրն են խիտ սրել, Միս ու արիւնդ են ծարակի (ՄՁՔ, 114); Քո գաղ ինձի մօտ խիտ կարօտել եմ (ն. տ., 211): Շատ քար ու քարձի մտայ, հաց Լաղցամ ու բար ծարակած (ն.ՔՂԿ, 57): Հայեցաւ զգրան վերայ գրեալսն (էՀՄԳև, 51):

5. Շահի (և վնասի) անուղղակի խնդիր.— Այսպիսի լրացում ստանում են բազմապիսի բայեր:

Օրինակներ՝ Ումն չեղիտօրեայ ժամանակի պէտս ունի, որ ծառայէ զիմանդորիսն և եկի (ՄՁՁՄ, 99): Յուլով ժամանակս ծառայեաց խնկաբ և ճրագաբ զփոտս չոր իւրոյ (նՄԺԱՎ, 108):

6. Հաղորդման անուղղակի խնդիր.— Այսպիսի լրացում կարող են ստանալ սովորաբար տրականով կամ նախորդավոր կառույցներով նույնիմաստ լրացում ստացող բայերը:

Օրինակներ՝ Ի՛նչ անեմ կամ ի՛նչ լինիմ, տէր չունիմ, որ գայ զիս ձեռնէ (նՔՂԿ, 144): Երանցի զազգն ճայոց (ԱՄՄՁ, 251): Զօրն աղաչել պիտի գտատամ, որ պիտանեմ հօգի մեզ տայ (ՅԳ, 297): Ոչ է պարտ մարդու երանել զկեանս իւր մինչև զգոյսնանն (նՄԺԱՎ, 331): Աղաչեաց թագաւորն զինսայն իւր, թէ զեայ (ն. տ., 135): Մանկօտբ, երբ ի հայ նստիք, ձենեղէլ աղաւաղ ձեզ բնկեր (նՔՂԿ, 294):

7. Աբառման անուղղակի խնդիր.— Սա գրաբարյան նախորդավոր հայցականի (ի+հայցական, բնդ+հայցական) արտացոլումն է: Այսպիսի լրացում ստանում են փոխարկման գործողութուն ցույց տվող բայերը:

Օրինակներ՝ Գարծիր օ՛ւճմ թաղեկոտնան (ՀՀՄՔԲ, 492): Կուզան հայերն և ամէնն երեղէն են փոխալ (ԱՄՄՁ, 254): Բաժանեցին զամենայն ինչս որ կայր՝ երեւ բաժին (ԺԵՂՁԱ, 125):

8. Մատուցման անուղղակի խնդիր.— Սա նույնպէս գրաբարյան նախորդավոր հայցականի (ի+հայցականի) արտացոլումն է:

Օրինակներ՝ Պարտ է այսօր ուրախանալ... Անոչ պիտի թաք լեցնել, Տալ սիրելի իզրոր ձեռն (ԱՄՄՂ, 138): Ո՞ր տայր զդուրս իմ շունձարաւս յուրց, և դաչս իմ աղբիս արտատայսն (ՄԱՊ, 43): Աստուած է սակզծեր զվարդն ու տունը փուշն ի ամանաթ (նՔՂԿ, 183):

բ. Բայի լրացումներ պարագայական հայցականով

Միջին հայերենում հայցականը պարագայական կիրառության ավելի լայն շրջանակ ունի, քան գրաբարում: Պատճառն այն է, որ հայցական-

ըր կատարում է նախորդավոր և նախադրությամբ կառույցների գեր: Այսպէս՝ հայցականը գործածվում է ժամանակի, տեղի, նպատակի, ձևի, շարի իմաստներով:

Բայի լրացումը ժամանակի հայցականով.— Այս դեպքում հայցականը կարող է իր հետ լրացում ունենալ կամ միայնակ հանդես գալ: Լրացյալ գարծող բայերի իմաստային աճմանն արտահայտում չունեն:

Օրինակներ Միս օրն տեսին երազ ի գիշերի երկուս արժանաւոր կրօնաւորք (ՍՄՊՅ, 68): Քանի ցերեկն շինէին, գիշերն ի փոլ գայր (նՄԺԱՎ, 254): Խոյն ժամն սպանին զՊոլիզն (ՍՄՊՅ, 30): Օր մի երեկ շատ ձին (ն. տ., 31): Մէկ ալլ օրն շինեաց (նՄԺԱՎ, 128): Այս ծով ու անձեան գիշերս Ես ի ձեր դոստակն եմ եկեր (նՔՂԿ, 212): Եղիկ մի ջրին խմելն զեղջերաց զշուքն եր տեսեր (ն. տ., 284): Գեա ու գիշերն արի (ն. տ., 123): Օրիկ մի շխար շնկեր (ն. տ., 166): Ելար ու այն պանն եկիր, որ առել հոգիս բերանիս (ն. տ.): Նա այն մեղքն օր վերջին առաւիճ զնա չօրն անշէշ (նՄԺԱՎ, 16):

Երբեմն ժամանակի հայցականը գործածվում է ի+հայցական կառույցին զուգահեռ:

Օրինակներ՝ Ի տոյն ամի ի ձմեռն երեկ խիտա ձին վաթսուն օր լամենայն առջիս, գիշերն գայր՝ ցերեկն հայէր (ՍՄՊՅ, 57): Զամէն առի յայս ամենն զով սիրեմ, նա զայն կու տանի (նՔՂԿ, 181): Ի քանն օր գիշեր ու ցերեկ չկարեցաւ (ՍՄՊՅ, 115):

Երբեմն աներող զերբայն էլ կարող է գործածվել ժամանակի իմաստով:

Օրինակներ՝ Տեսեօրն զնայն մին զիրն Գ օր հաց չկերայ (ԺԵՂՁԱ, 657): Եղիկ մի ջրին խմելն զեղջերաց զշուքն եր տեսեր (նՔՂԿ, 284): Աղտոր մի գնալ տեսայ (ն. տ., 65):

Ժամանակի հայցականը կարող է գործածվել տրականին հարադրված օրինակ՝ Ամէն առաւօտ լուսին գիշք թողուս և ի յիս դառնաս (նՔՂԿ, 172):

Բայի լրացումը տեղի հայցականով.— Տեղի հայցականը կա գրաբարյան ի+հայցական կառույցի գերն է կատարում: Ընդ որում պետք է արտերոսկի ուղեորության հայցական և դադարման տեղի հայցական:

1. Ուղեորության հայցականը լրացում է դառնում շարժման բայերի համար, ինչպէս՝ գնալ, երթալ, առաքել, մտանել, հեղուլ, կլանել, իջանել և այլն:

Օրինակներ՝ Բագում անգամ զեկուղար ոչ գնալ դանդառնալի գնալ, Լապարեն զայն (ՄՈՒԺ, 377): Դեպքով ճաշու մի ճանապարհ (էՀՄԳև,

53); նա այն մեղքն օրն զճրջին առաւ զնա հարն *անշէշ* (ՆՄԺԱՎ, 16); եկեալ առ նա մեծ կրիսյ մի՛ սովորեցաւ և զայր սոս ծառոյն (ն. ա., 189); նա ինքն զիս հեղեր եկիր (ն. ա., 258); Աուր միում բազան անկաւ ակնաւ (ն. ա., 322); Էնտ կատարին շաղագն կաւ մանկը (ն. ա., 324); Քանոնք իմ շինածմ իջնումի, ասիրենք շատոց տուն ու տեղ (ՆՔԶ, 96); Այ սք կամի որ աստուծոյ պիտանի լինի, պահք կեանայ և պարեկապարտին բերանայ (ՆՄԺԱՎ, 279); Գինն զղջացեալ յանկաներ նա նորա լալով (ն. ա., 162); Եկէ լրջնէ Եկեղեցին (ն. ա., 265); Այդ ո՞վ է երգիկս եկել (ՆՔԶ, 123); Գու այլ իմ կրակն բնկնիս (ն. ա., 170); Լուսնէր սուպարայ շապիկն ու կերբեր հովն ծառերուն (ն. ա., 105); Անոնք զինք, լիովումն էլնեն (ն. ա., 219); Մեր դուռն հրք գալու լիք. ջրոնկով ինձ է՞ր շիր ստեր (ն. ա., 128):

Որքանն Հայցականը կարող է մեկնարանովի օւղեղութիւն տեղի և նպատակի իմաստներով: Օրինակ՝ Գժար թուր ձեզ ժամ գայն (ՆՄԺԱՎ, 266):

2. Կարգման տեղի հայցականը լրացում է լինում դադարման բաշերի համար, ինչպես՝ կեայ, բնակել, կանգնել, կայ, բուսանել և այլն:

Օրինակներ՝ նա պարտ է զրն, որ եպիսկոպոս արհեսկիսկոպոսի գաւառ կենայ (ՄԳԳ, 24); Սատանան հտես զկզամ՝ Գրախոհն դուռն էր նա կանգնած (ՖԳ, 523); Ի անն Ազնայ օրդիքս նեք օտար տեղիս բնակեալ (ՀԵ, 144); Այն Եկեղեցայ դառն երկու ծառ կայր բուսած (ՆՄԺԱՎ, 212); Սեսս գայն անկիւն շաղպցին (ն. ա., 324); Երբ սէրն ի յաշխարհն եկաւ, եկաւ իմ սիրտս բնակեաց (ՆՔԶ, 37); Ծուռնաֆոր ծայրիկ կիր, որ ծովուն հասակն երկի (ն. ա., 43); Ես այն հարեուն էի, որ գեպիւն կուտ շուտի (ն. ա., 58); Մովսէղ ալ ի դուրս եկամ, ունեւրող շուքն բնանամ (ՆՔԶ, 96); Աստ մի ծառոց հանգչէր ի ճաշակել (ՆՄԺԱՎ, 30); Գու որպէ՛ս գիտաբեր, որ զինի արին կայր (ն. ա., 203); Զըլուրն վարդենի տնկան (ՆՔԶ, 118); Աշան ետար էր փեկներէն (ՀԵ, 167); Այլ չի մնաց երեսս դուն (ՄԶՔ, 129); Քան զմարդարեւն շարն էի, անարժան տեղիկ վարեցայ (ՆՔԶ, 300); Ես յակէս լիստակ կայն ու հազար ձոր պլտուրեցայ (ն. ա., 298); Քանի՛ տեղս ա՛նով կենանք ու զոգանք, թէ ինչ կու լինի (ն. ա., 206); Անշափ հարստի դատրիկ տառակին ծոցիկն է օրեր (ն. ա., 210):

Երբանն Հայցականը կարող է մեկնարանովի և՛ տեղի, և՛ հանգման իմաստով: Օրինակ՝ Քուխ աշտին ծարուր բաշի, էզ քաֆրիկդ էլեր յօրինաց (ՆՔԶ, 111):

Քայի լրացումը եզատակի հայցականով.— Այս դեպքում Հայցականը կատարում է զբարարյան ի-խայցական կատարչի դեր:

Օրինակներ՝ Երթամ խնորմ հեղեղաց թագաւորին դուստրն ինձ կրնուրիւն (ՆՄԺԱՎ, 293); Այ ընդունին զնա և ոչ անունն զինքն հարուստիւն (ն. ա., 299); Անում ի սարերդ ելնամ ու ծաղիկ փայլմ սիրու զիկ (ՆՔԶ, 96); Գիտեմ թէ ի բուն եկեր, նա եկիր հոգոս հոգեման (ն. ա., 134); Զերկիր բարեկաւս բերես, զիս ի տուն տանել չկարն (ն. ա., 149); Բռնեցաւ մեք գաստուած վկայ (ն. ա., 193); Զոր հայրն պատի մեննմ, քեզ ինձի կուրնմ, թէ կուտայ (ն. ա., 211); Առի դբազաս որս կայ, թուրքի, զինչ մաղպուն եղայ (ն. ա., 250); Մանկորք, երբ ի հաց նստիք, մենեցէլ ազբատք մեզ բնկիր (ն. ա., 294); Մերկոց հանդերձ շեմ հաղպեմ, Այ հրահոց տես զհացել (ՀԵ, 176); Երբ մեռնիմ՝ ինձ պաշար զբէշ կու տանիմ (ն. ա., 197); Ունբերդ է կամար կապեր ու կերթայ ի Մարն քալան (ՆՔԶ, 77):

Քայի լրացումը մեկ հայցականով.— Լայցականը մեկ իմաստով քիչ է պրոնոմինալ կնդ որում կնոմ օրինակների մի մասում էլ մեկ իմաստը խտուն է վիճակի իմաստին: Լրացյալ լինում են տարբեր յորմբերի բայեր:

Օրինակներ՝ Ռաեկայ զոգածքն պինդ ոտնց (ԲԶ, 105); Զասես, թէ դու մարդ ծնար, շիրտի ի յէշ նմանես (ՖԳ, 291); Յիշխանաց քաշ և զինատրն Յերակ որ տեղն արտում կենայ՝ Գայ մատ ի քեզ նստի հերշտակ, երե՛ զնայ քան գաստանի (ՀԲՏ, 192); Որ երբ յառնեք յօրն վերջի, նա չեւկիմ ծառ յորացել (ԿԵՏ, 123); Սուրբալ լուսեղն լուս ես, կասին բոլորումն էլնես (ն. ա., 159); Ի յնոր Փլուսն զնտոյն բուսակնս Երիկ անմամն (ԳԱՏ, 183); Ես գայն նոր ժամանց գառն երեկցաւ (ԱԲ, 306); Զաստուած անցել զքո մի սերնի, որ դու ապա մարդ եւկիս (ՖԳ, 270); Արցունքս ի յերեսս ի վար չուր կերբար, նա արին զարձաւ (ՆՔԶ, 152); Լոյսն աւե՛սաւ ապրիւր ցօյանայ (ն. ա., 306):

Ձեի իմաստն ալիկի հանախ արտահայտում է լրացում ունեցող հայցականով:

Օրինակներ՝ Ազգառի կերպ ի շուրջ կու գայ (ՆՄԺԱՎ, 247); Ի՞նչ ցեղ գարեւնս սպանցիր (ն. ա., 301); Գայրն ժողովեցան և ուրախացան ուրախարին մեծ (ն. ա., 41); Զեղ է՛նջ դատար ևս զիմանամ (ՀԲՏ, 142):

Երբանն մեկ հայցականը զուգակցում է զործիականին: Օրինակ՝ Բլրուրի գան դասս դատով (ԿԵՏ, 121):

Քայի լրացումը վիճակի հայցականով.— Սա լրացում է դառնում

ինչպես կրկնակի հայցական պահանջող (տեսնել, գտանել, բազու և այլն), անպես էլ շեղոր սեռի բայերի համար:

Օրինակներ՝ ես այլ ձեզ ծողով չեմ կարող գտանել (ՆՄԺԱՎ, 27): Ասէ, թէ չգտայ զինք կոյս (ՄԳԳ, 53): Տեսանի՛ն զինքեանս պատմապատա անաքի Տեսան (ՊԱԿ 484): Տեսայ զնա խիստ աստիք, Նախուշահուս գլշ մի ձգած (ԷՔՏ, 177): Թէ երթամ ու դարիւղ մեռնիմ, զարքն ձեզ, զտերն լիշեցեք (ՆԹԷ, 234): Թէ մարդ ես ու սեր ունիմ, նա ծառայ մե֊սիբ կրօնակն (ն. ա., 129): Վախեմ թէ չարկամ լինի, զայ զիս այս հայտ տեսանի (ն. ա., 257): Մտայ քո զինչն մեռնիմ, որ շերտակ է զես կարող էր (ն. ա., 78):

Բայի լրացումը չափի հայցականով.— Զարի հայցականը սովորաբար թվականով կամ այլ խոսքի մասով արտահայտում է լրացում է սենձնում: Ընդ որում բայի լրացումն արտահայտում է ժամանակային, տարածական կամ այլ կազմի չափ:

Օրինակներ՝ Աշաղես անկին զօրս բազումս (ԿԳՊԷ, 235): Շատ օրեք զայր ձայնն նոցա ի խորջր անտի (ՄՄՊՑ, 47): Բազաւորն Վոտոնիստ մի աւարի եկաց Թագաւոր (ն. ա., 71): Զօրն աղաւել տիրի զԱտուած, որ գիտութեան հոցի մեզ տայ (ՅԴ, 197): Նա տալցնիլ զկէս արեան զինն (ՄԳԳ, 75): Լացին երեւ որ զանտիրանայն խորանց (ՄՄՊՑ, 47): Ըկկ բերան զոչնս այդ աղօղ ձայնիւր (ՆՄԺԱՎ, 30): Գովմ զբեզ հազար բերան (ՆԹԷ, 184): Ի յառաջիկ օրն տուր կէս լիւր (ՄԷՋՄ, 41): Աես զայց յաւորն երկու հեզ (ն. ա., 42): Հինգ ու կէս դար բողբ ի խոր խաւորի (ՅԴ, 446): Մին ամիս օրոց գիշոր տեղաց իիզ մի (ՄԱՊԷ, 47): Վայ տամ թեզ հազար բերան (եզ, 185): Հնձնու երկու որ ու բազու երեւ օր (ԲԶ, 80): Գնացին ամ մի մեծաւ աշխատանքօք (ՆՄԺԱՎ, 231): Էր ուժով կրաշտ, որ տասն ամիս անձրե չեկաւ (ԺԴԷԷ, 470): Ապա ամիս մի հինգու կիցս (ԺԿԷԷ, 252): Որ մէկն ապրի տասն տարի (ՄԷՔ 107): Թապի մի վանա կանն ու հազար դեկան կու գեի (ՆԹԷ, 189): Իմ հար, էր զայց ինձ ախր, քո ալբիս հազար ժամանակ (ն. ա., 126): Ասէին, թէ Կ. անու հանապարհ ջորս ոչ կայ (ՆՄԺԱՎ, 136): Իմ հարն ի մտօրս պիտուր, խմկա՛մ օրեկ մի քանի (ՆԹԷ, 94): Մեզ նոր կարասէ զինի եր աղաւկի մին գաւ: (ԺԵԷԷ, 429):

Երբմէն հայցականը կարող է մեկնարանով չափի ե ժամանակի իմաստներով:

Օրինակներ՝ Առեւ պատուրս հօրն բազում ժամանակս (ՆՄԺԱՎ, 159): Այսպէս ժամանակս ինչ սիրով խաղալին առ իրեարս (ն. ա., 226): Տարին տասներկու ամիս կու հուր խձարն ի գօտիս (ՆԹԷ, 110): Ճրայ

թիզ երեկ կուտամ, պան մ'Էրս, պահիկ մ'անգաւկս (ն. ա., 162): Տարիս զամէն վախճամ կացա՛մ ի գեղ և ի քաղաք ի յանօրինաց (ԺԵԷԷ, 422): Գիշեր ու գերեկ կու լամ, անափ իմ հարն կու լու՛" (ՆԹԷ, 242): Ժամիկ մ'աշերտը ի զատ էր կացի, նա զիս մտացար (ն. ա., 155): Մեղայ տաս տիւ ու գիշեր (ՄԷՔ, 140):

Գ. ԲԱՅԻ ՎՐԱՅԻՆԵՐԸ ԲԱՏԱՆԱԿԱՆ ՀԱՐՈՒՄԸ

Միջին հայերենում բացառականը բայի լրացում դառնում է ավելի շատ խնդրային հարաբերութիւններ, թե՛ն պարագայական մի շարք իմաստներ անկա են նաև այս հոլովում: Բացառականը կատարում է գրարարյան գլխաբաղական, ինչպես և այլ կատույցների զեր:

Բացառականի խնդրային իմաստներից են անջատման (զատման), խուսափման, պակասութեան, պահանջման, անձի-կալիտային, կլման-սկզբնակետի, կլման, նյութի, սերման (ծագման), միջոցի, քնդորինակման, մասնակցի, զերարերութեան, հարորդման, հանգման, ներգործող խնդրի, պատճով ներգործութեան, հանձնատալեան և պերպարութեան, սահմանափակման: Պարագայական իմաստներն են տեղի, ժամանակի, պատճառի, հիմնօրի, ձևի, նպատակի:

Միջին հայերենում բացառականով լրացում էր որովում արկպիտի բայերի մտտ, որոնք այդպիսի լրացում չեն ստանում ոչ գրարարում և ոչ էլ արդի հայերենում:

Օրինակներ՝ Վայելէ թեզ ծողկիլ ի գունդ (ՆՄԺԱՎ, 30): Ի՛նչպես ասեմ, թէ զնա,— մանկան սիրտս իրավ կու մնայ (ՆԹԷ, 115): Բշ տանի՛ համբերութիւն, որ լսեմ տա՛նք մի Բեկ (ն. ա., 144):

Այսպեղ ևս անկա է իմաստների համաստեղում, որը նշում ենք հա՛մապատասխան իմաստների քննութեան մեջ:

ա. Բայի լրացումներ խնդրային բացառականով

Անջատման (զատման) բացառական.— Անջատման բացառական տերմինը գործածում ենք ոչ թե նախաբառութեան անջատման անողզակի խնդրի անդամի նշանակութեամբ, այլ նեզ, հոլովական իմաստով, որը ցույց է առիտ այն ստորական, որից մի բան է զատվում: Անջատման անողզակի խնդիր են զատման, խուսափման, պակասութեան, պահանջման, անձի-կալիտային, կլման-սկզբնակետի, կլման, նյութի, քնդորինակման բացառականները:

Հատուկ բացառականով լրացում ստանում են անջատել, առնող, գատել, բերուել, պատտել, մեծել, րնկնելու, հանել, ալ, հեռանալ,

Բակել, քանալ, իլել, խզել, խտորել, կորզել, հատանել և այլ բայերը
Օրինակներ՝ Վէժք ի վիճաց պատառի (26, 245), երբ իրիկուն ժա-
մուն եննայ, ի սեղանոյն ոչ ենաւնայ (ԱՄՄՂ, 98): Քակեաց զսակին և
զքարիհան և զմարգարիտն ի գօտոյ ի սիրբ սեղանին (ՄՄՊՑ, 104), Միթէ
և զարացրբ բնորել պէշն և զկոմք ի միմնանց (ՆՄԺԱՎ, 107): Երբ զիս
ի բնել գառնե, քան զմեռնեկն այլ ճար չի լինի (ՆԹ24, 50), Որ յայս
բղբիւոյս կարէ՛ նայ աստուած զնա ի կենաց կորէ (ԺԵ22Ա, 322): Շատ
որդի ի հօրէ բաժանեց և որոտոր ի մօրէ, քուր յեղբորէ և կին ի յառնէ
(ԺԵ22Բ, 149): Կտեց ի ծառէն կազնի բիր մի և սկսաւ զարկնուլ զա-
սունն (ՆՄԺԱՎ, 113):

Երբեմն զասուման բացատական կարող են ստանալ այնպիսի բայեր,
որոնց մտտ առայիսիք լրացումը սովորական չէ: Օրինակ՝ Զմեզ ի աղօ-
բից մի՛ մտանայք (ԺԵ22Գ, 127):

Խուսափման բացատական.— Բայի լրացումը այն ատարկան է, որոյց
տալիս, որից խուսափում, հեռանում է մի բան: Այսպիսի լրացում պա-
հանջում են ազատել, արգելուլ, զերծանել, պանել, մուրել, համբերել,
առողջանալ, շքել, ազատամբել, զտնալ, քաֆել, խուսափել, խույս
տալ, ծածկել, հրամարել, մեռնել, վրիպել, փրկել և այլ բայեր:

Օրինակներ՝ Լաւ պանեցէք ՚ի կարիքէ, ի յաղոյ և ի զոզէ (ԺԵ22Գ,
104): Աստուած յայլ պէրբարէն ազատէ (Ն. տ., 115): Միշն և ասարտեցան
ի ցաւն չի խլայ (Ն. տ., 238): Զեծար ի ձեռաց թոց (ՆՄԺԱՎ, 6):
Բոյզ զիշերն զգեկն բոյջ պանել ի զագանաց (Ն. տ., 9): Օտարացայ
ի սիրելեաց իմոց (ԺԳ22Գ, 130): Խիտա կու ամաչմի ի ձեզնէ (Ն. տ.,
245): Փայած էամ ի Բոլոսն (Ն. տ., 381): Կրին շքանի և ոչ ո՛րէ (2ԹՏ,
188): Ամենեկն ի դարմանէ պատասառ (ՄՀՋՄ, 9): Եւ զերծանիմ յոր-
տաղեայն (ՅԳ, 330): Տէր աստուած խափանէ զամենն հիւանդութիւն ի
ճաատացանց Բիստանիկն (ԱՌՌ, 170): Ի յամէն բրուն և յաղի պանէ
զքեզ (Ն. տ., 190): Եւ ընդէ՛ր կամ մուրեայ յարգարտութեան նախա-
պարեաց (ԿԵՏ, 153): Զեամբրել ի կերակրոյ և շատ ուռէ (ԳԲԲՄ, 129):
Ամենայն շար և աղտոյի խոտից պանիս զիգոզ (ՆՄԺԱՎ, 212): Ի յերկ-
նաւորաց զտուոյ Մազայիլ երսուն եւ շքել (2Ե, 144): Աստուած պանէ
զմարդն իրայիկեայ ցաւուն (ԱՌՌ, 162): Ի կերակրոցն խոզուցն արգելն
զմեզ (ՆՄԺԱՎ, 21): Ելանիցեն յիրաւանց և թիւրին յօրինաց և ի կա-
մացն տեսն (Ն. տ., 105):

Երբեմն բացատականով լրացումը կարող է մեկնարանվել և՛ խու-
սափման, և՛ անցուման իմաստներով: Օրինակ՝ Յամտան ի մէջն և ձըմ-
տան ի մէջն զտղան ի կարնէն մի՛ կարե (ԱՌՌ, 68):

Բայի լրացումը կարող է դիտվել և՛ իբրև խուսափման բացատա-
կան, և՛ իբրև տեղի հայցական: Օրինակ՝ Ուղիզ համփնէ ևմ մուրեամ
(2Ե, 180):

Պակասութեան բացատական.— Լրացումը ցույց է տալիս այն ատար-
կան, որից զրկվում, պակասում է մի բան: Այսպիսի լրացում ստանում
են քիչ թվով բայեր, ինչպես՝ զատարկանալ, մեռկանալ, քափել, մաքել,
սրբել, խառաղիցանալ, առողջանալ, անէրանալ, կազգուրել և այլն:
Օրինակներ՝ Մտար ի պաղոյ դատարկանամ (2ԹՏ, 168): Մաքեաց
չարենէ զքաղաքն (ՄՄՊՑ, 62): Զոր ընդի սրբամ լինի ի կարագն (ՄՀՋՄ,
42): Նա հիւանդին մարմինն սրբի ի ասուրբենն (Ն. տ., 61): Ով որ
ըմպէ ազարտութեամբ, ի փառաց, ի խելաց, և յապրանաց քափի (ԱՌՌ,
590): Մեռկացաւ ի զգեստոց (ՆՄԺԱՎ, 211): Քափեցայ յաղոյս (Ն. տ.,
85): Լոռոյ և ապրանացն կուրպալ զքնզ (2Ե, 203): Լոգիս յախտից
քերտացի (ԺԵ22Գ, 250): Քափի երեսի չուն, իւր սակի տաննն տիւրի
(ՆԹ24, 189): Մեռնիմ նա ի թո սէրուլ, որ երթաս յիսնէ խալբսիս (Ն.
տ., 166):

Երբեմն լրացումը կարող է մեկնարանվել և՛ իբրև բացատական, և՛
իբրև արական:
Օրինակ՝ Աչկանցն լուսուն պակաի, ով որ թո գալոյ չի կամի (ՆԹ24,
90):

Պանհանջման բացատական.— Լրացումը ցույց է տալիս այն ատար-
կան, որից մի բան պահանջում, խնդրում, տկնկալում են: Այսպիսի
լրացում ստանում են սակավաթիվ բայեր, ինչպես՝ խնդրել, պահանջել,
ուղել, տկն ունել և այլն:

Օրինակներ՝ Ակն ունէին քազտարէն, թէ զայ ու ազատէ զամենն-
սեան ի զերողէն (ՆՄԺԱՎ, 1): Գարոյն հասապն կու խնդրեն յիւրնէ (Ն.
տ., 23): Աչիցս արտասար ուղեց, նա արին ի վար վաթեցաւ (ՆԹ24,
37): Գուն տնորմէն ի՞նչ կուզես, երբ նա մեք կուակն է վառան (Ն. տ.,
109): Իմ ևարն ի բնէ կուզեմ (Ն. տ., 167): Լոգիզ պահանջեմ ի բնն
(ՆՄԺԱՎ, 178): Ուղեր պարոն վապէն՝ զի տեսցէ զնա (ՄՄՊՑ, 55):
Խնդրեաց զնա պարզես ի պարոն կաննէ (Ն. տ., 96):

Անօրի-կախկանային բացատական.— Լրացումը ցույց է տալիս այն
ատարկան, որից մի բան է ստացվում: Այսպիսի լրացում պահանջում
են անգուլ, գնել, գառնել, բերանել, ծառանգել և այլ բայեր:

Օրինակներ՝ Անտուն զվարս ի տեսնէ (ՆՄԺԱՎ, 48): Մատանայ
զգաւնայ զմարդն մեղօք յաստուոյն (Ն. տ., 47): Անէմս բնկալար յաս-
տուոյն (Ն. տ., 154): Նորա պատուեսան յաստուոյն անտուն (Ն. տ., 229):

Ի Բեզնէ դրամ շեմ առի (ն. ա., 323): Աղուէն փորձ առնոյր ի հմանէ հանել զպանիրն (ն. ա., 30): Ի տարիս յայս կառ պարն Քորոսն ի Հոռն-մէ ԶԳՄտիս (ՍՄՊՑ, 82): Բնկալաւ բազում սէր ի բազաւուէն (ն. ա., 92): Ի տոն աուրբս պարոն Հայոց շէքում գնեց զգն լուսատոյրին և զամենայն մասունս ի յանօրիանց (ն. ա., 118): Երբը ընդ իւր հրովարտակօթ ի Ղանէն (ԿԳՊՁ, 277): Յաւաւընէ ևս պատիւ և փառք ստանամ (ՀՇՄԲԲ, 192): Զիր զեկանն ի ծախաղէն առնու աճյալազ (ՍԳԳ, 62):

Երման-սկզբնակտի բացառական.— Մա գործողութիւնն սկզբնակտն աւարկան է ցույց տալիս: Լրացյալ լինում են տարբեր իմաստի բայեր, ինչպէս՝ զարարել, զարբնուլ, կանգնել, պատուել, լսել, լսել, դատնալ, խտարել, յանել, յարուցանել և այլն:

Օրինակներ՝ Իսկ զպատն որ ի հրանդէն լինի այն է, որ շսեր ի բժշկէն, այլ զիւր կամսն այլքն (ՄՇՂՄ, 136): Կնցա՛մ յալլոց ոմանց պատասկանաց (ՄՈՒԲ, 281): Ի մնակոց կարող ևս յարուցանել (ն. ա., 286): Հրամայեաց զարարել ի կառարկոյ զբաղաբն (ԿԳՊՁ, 372): Ես ոչ թուգանամ ի սիրոյն Քրիստոսի և ոչ զստնամ ի նորին հաստոյն (ՊԱԿ, 145): Խաւարեցան աչք ի տեսանելոյ (ՍՄՊՑ, 12): Յիկէն սկանի սպզ իմ (էՇՄԳԱ, 181): Խաղցան յիրենց լուսայն (ԿԵՏ, 125): Յակոր, զարբիր, ի քնոյ մեղաց (ՇԵ, 172): Է՛ր պարապիս դու ի լալոյ (ն. ա., 172): Ոչ զպատել ի լիզելոյ զտերնն (ՆՄԺԱՎ, 77): Օր մի լսեց լիմաստեանցն (ն. ա., 156): Զըջանայ ի մեղացն (ն. ա., 289): Ոչ ունիմ համբերութիւն, որ լսեմ սահա՛մ մի Բե՛նէ (ՆԺԷԿ, 144): Պագնեմ, աչքբուս դրեմ, որ զարի աչքս ի լալուս (ն. ա., 163):

Երման բացառական.— Լրացումն այն աւարկայացած տեղն է ցույց տալիս, որից կենում է մի բան: Այսպիսի լրացում ստանում են ելանել, բղկնլ, հասլ, հանել, կարել, գալ, դիմոցանել, բարել և այլ բայեր:

Օրինակներ՝ Անուշահոտ գայ իբան (ՄՇՂՄ, 67): Արատարն ի վայր բալինս ի աչքբուս (ԿԵՏ, 166): Անճառ հոտ ի Բէ բուր (ԳԱՏ, 170): Գուրդին կանէ սասմո՛ւտցն ի դեղն (ԳՔԲՄ, 57): Զօր մահուն մտաց մի հանէր (ՀՄՐ, 129): Բազոր զիմէ մի կարեւր չուր բազում ծամանակն (ՆՄԺԱՎ, 124): Արատարն բախկին աչացն նորա (ն. ա., 161): Եզրայրն ասաց, թէ խտուլուս շան հոտ կու գայ (ն. ա., 200): Յաչիցս քեզ ստու հանեմ, զրեզ ջրեմ, որ պայծառանաս (ՆԺԷԿ, 97): Կտրել է սրտին էրանի, ' և աչքուն սրուն կու կարէ (ն. ա., 164):

Կտրի բացառական.— Լրացումը ցույց է տալիս այն աւարկան, որից մի բան է պատրաստվում: Այսպիսի լրացում ստանում են գործել, շինել, առնել, կազմել, ստեղծանել և այլ բայեր:

Օրինակներ՝ Գու թաղիս ի վիմէ փարած սապանի (ՅԳ, 447): Յառտոյն գոհանայ ստեղծումն ի հազոյն (ՇԵ, 183): Հլուս մի ճարտար... ի յամբրակ կտէն սեղան մի իրեար ծեփաց զանազան յորինումովք (ՆՄԺԱՎ, 239): Ի յամբրակ կտէն շարարանօթ զսեղան մի շինեցի (ն. ա., 240): Կազմեաց զհաչիլի մի յապկիոյ և յարենոյ (ն. ա., 341): Գաւկեան... զպահարան սրբոց յոկոյ և յարծարոյ և յակիանց զարգաւած (ՍՄՊՑ, 104): Գոնակի առձրբէն դենն, որ հոգուս տունն կրթուս ու գոս (ՆԺԷԿ, 149): Եաղզած ես... ի չորս իրաց, այդցեղ շէնքը ամուր չի լինի (ՇԵ, 148): Ի յայս կաւէս թագաւորն մեր շինել կրետ շատ փարշեր (ՇԵՇՂԷԳ, 462): Կերակրի դնայ իւր սպրանացն (ՆՄԺԱՎ, 66): Իմ կար, ի թո շատ սիրով արձրթէ զարած շինեցի (ՆԺԷԿ, 98):

Սերման կամ ծագման բացառական.— Այսպիսի լրացում ստանում են սերել, ծնանել, ծագել, ստեղծել և նման բայեր:

Օրինակներ՝ Զայս սաց, թէ հուն է ծուկն թէ ճուկն ի հաւուն (ՆՄԺԱՎ, 183): Դու ի հմանէ ծնար (ն. ա., 200): Ի ու ի հմանէ ընծայեցար (ն. ա., 203): Թէ որ որ ոչ ճնցի ի ջրոյ և ի հոզոյ, ոչ մտանէ յարգայութիւնն սաստոյն (ն. ա., 286): Մազէ լոյս ի թո ծոցէդ, զինչ զարնան կայծակն ի յամպէն (ՆԺԷԿ, 66): Ես յայն համարուէ ծերին լուս ծագեաց միսն զիրշերին (ն. ա., 286): Գարձեայ ծնանիս ի սասանայլ մեղօթ (ՆՄԺԱՎ, 83): Կոյս ի լուսոյ ծնաւ (ԿԵՏ, 129):

Երբեմն բացառականը կարող է մեկնարարուել կ' ծագման, և՛ նյութի իմաստներով:

Օրինակներ՝ Ի հակառակաց ստեղծում ես (ն. ա.): Գեղեցիկ յօրինեց զկինն ի կողէն (ՇԵ, 192):

Կարող են համաստեղծել ծագման և կլման իմաստները: Օրինակ՝ Փոքրիկ, բոլորի զանակ, որ ի Բէն ծագց յունեակ (ՆԺԷԿ, 126):

Երբեմն լրացումը կարելի է մեկնարարուել և՛ իրեն նյութի, և՛ իրեն ծագման, և՛ իրեն տեղի բացառական: Օրինակ՝ Թուխ ամպն այլ բամպակ աւէր ' ի ծովէն զերևան քաշիցեր (ՆԺԷԿ, 99):

Ընդօրինակման բացառական.— Լրացումը ցույց է տալիս այն աւարկան, որն ընդօրինակվում է, որից օրինակ է վերցվում: Լրացյալ լինում են սահմանափակ թվով բայեր, ինչպիսի՝ ուսանել, սովորել, բարգմանել և այլն:

Օրինակներ՝ Նստան առաջի նորա, և ուսանէլին ի հմանէ (ՍՄՊՑ, 35): Գիտեմ որ ամէն մաթոց չկարէ ոտնիլ ի գլէն (ՇԵ, 208): Ես այս ոչ բոս կարգի և լի, այլ համառօտ և ծաղկարազ աստի և անտի հաւաքեալ, յայլ և այլ գրաց և մտաց այլայլած (ՄՇՂՄ, Ներածութեան): Ուսա

ողորմութիւնն ի շանէն (ՆՄԺԱՎ, 275): նա վաղեաց յառաջ նոցա, որպէս
ուսեալ էր յաթիւնէն (Ն. տ., 99): Գիրքս այս վերջին... նոր է քարգմա-
նած յառաջը ի մերս (ԺԴՂԶ, 221): Շատ աշխատեցաւ և ուղիքի դաս
ի Հնամարտ և յուղիղ օրինակ (Ն. տ., 509): Գրեցաւ սայ յազնի օրի-
նակ (Ն. տ., 511):

Միջոցի բացատրական.— Լրացումը այն առարկան է ցույց տալիս,
որով գործողութիւնն է կատարուում: Լրացյալ լինում են աարբեր խոմ-
բերի բաշեր, ինչպիս' արբևոյ, զարգաւի, շինել, ամբացուցանել, լու-
սանալ, պաշտել, գրագիլ, կերակրել, փարսամանալ և այլն:

Օրինակներ՝ Ի մէկ առարկ փաստակէն շորս ճոգի կերակրեցի (էՀՄԳԱ,
49): Մերս այս ի գանձէն յայնմանէ իմոյ շինեաց զայս ամենայն (Ն.
տ., 144): Ահի և զողութեամբ պաշտլին զնստա յրևչից իրեանց (Ն. տ.,
200): Չէն տեսնես, որ կու օսես, յիտն զայտ զի'նչ գրագիլս (ՅԴ,
267): Քակեաց յեկեղեցական օպատք բազում անոթս սակեղէնս, զպա-
հարան սրբոցն յսկիոյ և յարծարոյ և յականց զարգարած (ՍՄԳՅ, 164):
Ապա բառեան ի քնաց իւրեանց, զի սովորեացի թուել (ՆՄԺԱՎ, 229):
Կենց դայ ի շարդար ընչից իրոց (ԺԴՂԶ, 356): Ի մարմնաւոր աշխա-
տութեանց խնամարկէին զմէզ (ԺԵՂԶԶ, 445): Ջերկիր ի իւր լուսոյն
նայլ (ՄԶԲ, 131): Մաղիկն փունջքումը է եղել, մարդ չի յղել խր կտո-
ւոյն (Ն. տ., 224):

Որոշ բառակապակցութիւններում բացատրականը կարելի է մեկնա-
բանել և՛ միջոցի, և՛ նյութի իմաստներով:

Օրինակներ՝ Խորհեաց նա և կազմեաց ժԲ, բնես սակիս. և զուխ
բնեացն ականց պատահականոց (ՆՄԺԱՎ, 2): Լեւոյ աստուած ի բարու-
րինէլ զպանկութիւն քո (Ն. տ., 80): Թէ չէ՛ զայս զեղիս քարերն արխեսն
կարմիր լուսնամ (ՆԲԶԿ, 23): Որ իւր քաղցր ամենէն յերկիր նա ցողէ
(Ն. տ., 187): Նարդոս ծաղիկն ու կինամոն լցուել են Աստուծոյ բարոյն
(ՄԶԲ, 224):

Ներքին բացատրականը կարելի է մեկնաբանել միջոցի և ձևի իմաստ-
ներով: Օրինակ՝ Ի յանուանէ մէկն կոչի (ՄԶԲ, 124):

Մասնական բացատրական.— Մասնական բացատրականը երկու դրեւո-
րում ունի՝ մասնական-ինդուպիս և մասնական-ենթակայական:

Մասնական-ինդուպիս բացատրականը ցույց է տալիս այն առար-
կան, որը գործողութեանը կրում է իր մի մասով: Մա բատ լուսկան
ուղիղ խնորի մի տարածեալն է և դառնում է ներգործական սեռի բա-
լերի լրացում, ինչպիս' ապ, զնել, նաշակել, ուտել, կոշել, ըմպել, առ-
նոց, բերել, ունիմ և այլն:

Օրինակներ՝ Տաւ ինձ սակոյ իմոյ քան զահհական (էՀՄԳԱ, 38):
Տան նաշակել նմա յարենէ իւրմէ (Ն. տ., 172): Չպատարեանն շարհե-
ցիք պաղոյն դու կերար (ՆԵ, 210): Ապա առ իւր կարենէն (ՄԶՄՄ, 41):
Եթէ որ յեկեղեցոյն միքէ կամ յանօրից կամ ի գգնսոց կամ ի մամուկի-
նէ կամ յայլ իրաց զգոսնայ, նա զկարգն կորսնէ (ՄԳԳ, 22): Լան այն
է, որ յամէն քաղցրէ և ի սրգլ և նաւրէ և ի ձկնէ շատէ (ԱՅԲ, 385):
Ով չիւր շուքն դիմէ, պաղոյն նաշակէ (ՆԵ, 188): Բեր ի ձկնէն, որ ուտեմ
(ՆՄԺԱՎ, 320): Նա ծագլ ի լուսոյ իւրոյ ի ճոգի քո (Ն. տ., 82): Կերաւ
ի պարտար կերակրոց (Ն. տ., 273): Խղելու չ' արեւնա ունիս. թէ չեղես
ու գաս մօտ ի իս (ՆԲԶԿ, 168): Յարենէն շիչէն առնի. թողք զք' ի
քեզ ուղարկի' (Ն. տ., 173): Եւ նա ծագլ է լուսոյ իւրոյ ի ճոգի քո և սրբէ
զանօրէնութեան քո ողորմութեամբ (ՆՄԺԱՎ, 82): Ի իմ կրակն տայ
քեզ (ՆԲԶԿ, 166): Ոչ գատու ի յայն կալէն (ԺԵՂԶԶ, 462): Պոսի մարտն
զիլ խմել, թող հանեն զայնքս երեւոյ (ՆԲԶԿ, 161): Անուան առիւծին
մաէն թէ հաղար առն, նա շուտէ (Ն. տ., 273): Եւ բաշլսն անարժանիս
քո յերկնային մեծ պարգեաց (ԿԵՏ, 206):

Ներքին բացատրականը կարելի է մեկնաբանել և՛ մասնական-ինդու-
պիս, և՛ ձևական իմաստով: Օրինակ՝ Յորժամ ցան բռնէ այն անդամն
նա զայն անդամն ի վերէն կազէ (ԱՅԲ, 166):

Մասնական-ենթակայական բացատրականը կիսով չափ է բայի լրա-
ցում: Այն ցույց է տալիս գործողութիւն կատարող առարկաների մի
մասը:

Օրինակներ՝ Վտուռնի ի յայլ Եփրորոյն ի յինքն (ՄԶՄՄ, 61): Գու
զայն կորէ և հան ի քէն, որ չիւր սերմանցն շրտանի ի քէն (ՆՄԺԱՎ,
225): Գիտեանք, որ չի կայր ի յորդե, զանս այրոց համար կրակա-
տար մնաց, և այլ օրինակի նար շիւր (ԺԵՂԶԶ, 61):

Ներքին բացատրականը կարող է մեկնաբանուիլ և՛ մասնական-ենթա-
կայական, և՛ մասնական-ինդուպիս իմաստներով: Օրինակ՝ Չլամփորն
իշեմ, զի ի մեռոց անթիւ են խոսովեալ (էՀՄԳԱ, 7):

Վերաբերույցն բացատրական.— Լրացումը ցույց է տալիս այն
առարկան, որին վերաբերում է խոսքը: Այս իմաստը գրաբարում ար-
տահայտում էր գլ-բացատրական կառուցով: Լրացյալ զառնում են
ասացական, զգացական, իմացական բաշիք, ինչպիս' խոսել, կապակով,
զագգանել և այլն:

Օրինակներ՝ Ի սաղբելոյ իւրոյ իշխանացն և յերկել թաշտման
կակածեալ՝ կորուսանէ զապիրտան զգոսնի ի զօրաց իւրոց (ՍՄԳՅ, 9):
Եւ Յովասափ սկսաւ խոսել յօրինաց (ԱԲ, 312): Աչքն զսեղանուր ի փ-

րոյն (ՆՄԺԱՎ, 329): Ընթերցեալ լինի ի արեղծեալաւ արքայն Աղծբ-
անդրու, որ ի միում բարացի յոյժ պատուեալ և մեծարեալ էղն (Ն. Խ.,
329): Աստածոր պատմի կամիմ եղելոյս, որ մեղ զիպեցան (ՀՄԲԲ,
549): Չկամք սասանային արի, յանցեմն խապար շունէի (ՆՔԶԿ, 286):
Ով ծաղկոտոր. գրտութիւն լիցի ձեզ, որ Թարդուս երէցս գանգառէ ի
ձեզանէ (ԺԵԶԶԱ, 150): Գանգառ արար յովամիցն (ՄԺ, 9, 227):

Բացասականը կարող է մեկնարանվել և՛ վերաբերության, և՛ ան-
ձի-կրակետային իմաստներով: Օրինակ՝ Յինէ բեզ խապար բերէ ՚ի
բնէ խապար մտ ի իս (ՆՄԺ, 101):

Հաղորման բացասական.— Սա հարցանել թաշի լրացում է, որը
գրաբարում արտահայտվում էր գլխաբացական կոտույցով: Օրինակ՝
նա հարցանեմ յանէղ, ով հրանելի (ԳԱՏ, 233):

Հանգման և ուղղության բացասական.— Սա լրացում է գառնում
փափակը, ծաւաւել, կարտել, հարդրել և այլ բայերի համար:

Օրինակներ՝ Հանցապղ հարդրելի ի մարմնոյ ի յարենէ անուն
(ԱՄԶԶ, 236): Ով արիւնէս է ծաւաւոյ՝ թող դաշ խմէ որ լիանայ (ՀՔՏ,
217): Գարնայ մտնաւաթ բերի՝ յերկնուցն սրն կապեցի (ՆՔԶԿ, 63):
Մեղօք կապեալ կան ի սասանայլ (ՆՄԺԱՎ, 83): Կու փափագիմ ի յայն
լուայն (ԿԵՏ, 130): Այս Բարք փաշայս զեօջայ Ալիբան կախեաց ի
փայտէ (ՄԺ, 2, 413): Մարտած ենէ բանի զինչ տունկն ի ջրոյն (ՀԵ,
183):

Կերպրոզ խնդրի բացասական.— Լրացումը ջույց է տալիս այն
առարկան, որից զործողությունը կրում է ենթական: Սա կրակետական
օտար բայերի լրացում է լինում:

Օրինակներ՝ Հազարացոց ազգէն զերեցաւ... Արեանարու զորաց
ներեցաւ՝ ճաղաթայից սէն խոցեցաւ (ԽԿ, 130): Ու մառն մառնեցաւ
իբր արաղղէն (ՀԵ, 192): Անտեցաւ աշխարհս ամէն ի անօրէն թուր-
մանէ (ԺԵԶԶԱ, 361): Խասան կուրեցաւ ի Չիրաղէն, և ոչ զիտեմք զինչ
լինելոց եմք (ԺԵԶԶԲ, 351): Նա անիծած լիւս սուրբ Յարութեւս (Ն.
Խ., 449): Յանօրինաց հալածիմ (ԺԵԶԶԳ, 420): Շատ զորաւոր մարդիք
խարտին ի ակարաց (ՆՄԺԱՎ, 112):

Երբեմն լրացումը կարող է գիտվել և՛ իբրև ներգործող խնդրի բա-
ցասական, և՛ իբրև սեռականով ենթական: Օրինակ՝ Գտին բլիթ մի հաց,
որ անկեալ էր հանապազհարցան (ՆՄԺԱՎ, 78):

Պատվով ենթորոնության բացասական.— Լրացումը ջույց է տալիս
այն առարկան, որից պատվիրներ ենթորոնվում է ենթական: Սա լրա-

ցում է գառնում հիմնականում զգոցական բայերի համար, ինչպես՝
ակն ածել, երկնչել, վախեալ, ձանձրեալ, գոհեալ և այլն:

Այլ իմաստային խմբերի բայերը եւ սասանում են այսպիսի լրա-
ցում, ինչպես՝ Բաշի, վալլի, հառի, Լեմնի և այլն:

Օրինակներ՝ Մի յանահի տաս որ յիճանճանայ ի բունէն (ՄԶԶԲ,
42): Եւ շատ դժարութիւն և պատահմունք եմ Բաշի ի յանօրինաց, ի
յայլազգացն, ի դատարաց, ի բազարաց և ի յլիանաց (ԱՕՐ, 7): Գծա-
խէն իսկիկ մի վախի (ՀՄԲ, 129): Գոհանայր սաստոճոյ (ԱՄԶԶ, 214):
Յաստանայր գոհանայր ստեղծուան ի Նորոյն (ՀԵ, 183): Անհաստ ու
անօրէն մարդ շատ կան, որ յաստոճոյ չեն երկնչեր (ԺԵԶԶԳ, 137):
Նորբնայն ի ցատն զարբեաւ (ՆՄԺԱՎ, 138):

Երբեմն բացասականը կարող է մեկնարանվել և՛ պատվով ներգոր-
ծության, և՛ ներգործող խնդրի իմաստներով:

Օրինակներ՝ Օձն... պարտաւանայ ի հոտայն (ՆՄԺԱՎ, 235): Ի
Բաղցարեմնէն, եղրաք, բոնկեր է պոկուրս ու կալրի (ՆՔԶԿ, 112):
Հանմնատարյան բացասական.— Սա անվանի և մարտայի լրա-
ցում է լինում, ուստի և հիմնականում այդ խոսքի մասերից կազմված
բայերն ունեն այսպիսի լրացում, ինչպես՝ սնցանել: Օրինակ՝ Հիւանդին
տաբուֆիւր ի շափու անցնի (ԱՕՐ, 80):

Սանմանափակման բացասական.— Լրացումը ջույց է տալիս այն
առարկան, որի մեջ սահմանափակվում է լրացյալով արտահայտված
զործողությունը, հասկանալի: Սա առաջին հերթին սահմանական ծագ-
մամբ բայերի լրացում է լինում, ինչպես՝ քուլանալ, ծուլանալ, սխալել,
սխալեալ, նանել, կուրանալ, կաղնալ և այլն:

Օրինակներ՝ Գիտացիր, որ կաղնալն մէկ օտիցն ի գլխոյն ճանչլի
(ԲԶ, 96): Կուրացնել չերկու աչաց արժան է (ՄԳԳ, 68): Պահոց, յազօրից
յոլորտուրենէ ևս խիտ ծուլանայ (ՀՄԲ, 149):

Այլ իմաստ ունեցող բայերը եւ կարող են սասանալ սահմանափակ-
ման բացասականով լրացում, ինչպես՝ հասանել, Բաղցնալ, խոցել
և այլն:

Օրինակներ՝ Ի բազմութենէ զորացն վտանգ հասանել զորացն ի հա-
ցլ և ներկին ի կեւակոց (ՄԲԺԺ, 259): Սկասն ի հացէ Բաղցնոյ (ՄԲԺԺ,
313): Մեղօք խոցեալ եմ յաշեոյս (ՀԵ, 180): Կթխակ մի գինով լցած՝
իմ ետրին ասղեն է դրած.— Իմ էար, խմէ իմ դիաց, որ ենէ Նոզիս բո
զիմայ (ՆՔԶԿ, 109): Յունիկ միտիթարոզ ոչ յերթուէ և ոչ յնկերոջի (ԺԶԶԶ,
274): Եւ ի լուոյն վտանց աշխիս (Ն. Խ., 308): Ջայդ պաղղ որ ի բո
բերենէ դու տօլի բո սրտի կամով (ՆՔԶԿ, 133): Մի ալոյզափ ի գու-

ծոց զիս յայտնապէս յանդիմանելի (ԿԾՏ, 181): Վայելէ քեզ ծաղկիլ ի գունդոյ (ՆՄԺԱՎ, 30):

Սահմանափակման իմաստը կարող է համատեղվել պակասութիւն իմաստին: Օրինակ՝ Իշխանք բաղմամբ ի տանց էլին եւ ի յեշից պարագեցին (ԳՏԲԳ, 312):

Կարող են համատեղվել սահմանափակման և ներգործող խնդրի իմաստները:

Օրինակներ՝ Ասի առակաց, թէ դալին ծերացաւ (ՆՄԺԱՎ, 44): Յանդուրեմնէ պատմի, թէ յանցանէն Շահարասայ՝ հայ ոմն արքեպ. Ընթանայ և կալուտ զաննա երիժարի նորա (ԱՄՁՄԶ, 258): Ասի յառակաց, թէ Քաղարք ոմն էրք օրդիս ունէր (ն. տ., 285):

Կարող են համատեղվել սահմանափակման և ձևի իմաստները: Օրինակ՝ Մի՛ պարծնեալ դու ի քէնէ, թէ ես զանծուց ատըր և մայի (ԿԾՏ, 207):

Կարող են համատեղվել սահմանափակման, տեղի, ձևի իմաստները: Օրինակ՝ Զարթնում՝ ես քեզ բովբըր տամ, որ ստից մատանց դու էրիս (ՆՔԶԿ, 217):

Որքեմն բացատրականը կարող է մեկնարանվել և՛ իրբն բայի լրացում սահմանափակման իմաստով, և՛ իրբն զեղչման հետևանքով գոյականի լրացում: Օրինակ՝ Թէ իր տամ անդին գուհար, նա համարի յինէլ խեցաւ (ԿԾՏ, 189):

Համապատասխանության բացատրական.— Սա գործածված է ընդ + տեղական կառույցի փոխարեն: Օրինակ՝ Առնոփն այնուհետև գտարին ի զլխարայ մարդկան (ՄԱՊ, 22):

բ. Բայի լրացումները պարագայական բացասականով

Տեղի բացատրական.— Այսպիսի լրացում ստանում են ինչպես շարժման, այնպես էլ այլ իմաստի բայերը, ինչպես՝ անցանել, բառեալ, ձկնլ, կառնել, իբանել, երեկլ, գալ, հոսել, տալ, կողպանել և այլն:

Օրինակներ՝ Չկարէին անցանել ի տղայն (ՍՍՊՅ, 31): Անմահական փտաց դրախտէն սա կողպանաց զիս (ԶԵ, 210): Զգեցին գմեծ խաչն ի գմբրէն ի վայր (ՍՍՊՅ, 61): Որք բաղանեացն էլանէ (ՄԶՁՄ, 27): Որք բարձր վայր թխարու (ԱՄՄՂ, 96): Գեաղ սյոց հեաղոյն վայրէ, Բարձրարեք լեռնաց հոսի գայ (ն. տ., 131): Թէ չէ Ազամայ դրախտէ քեզ կանաչ անրն մի շի տան (ԶԵ, 158): Էջ յարտուն (ՆՄԺԱՎ, 1): Երևեցաւ

ինս հրեշտակն ստից կողմանէն (ն. տ., 295): Որք որ ի դիմացս երևու փախիս (ԿԾՏ, 158):

Տեղի բացատրականը կարող է դուրսգցվել ի + հայցական կառույցի հետ: Օրինակ՝ Փայցեալ շըջլ տեղաց ի տեղ (ՆՄԺԱՎ, 330): Ըսպղեր եմ չրի նման 'ա յերկրաց եւիլի կալ գեամ (ՆՔԶԿ, 231):

Որքեմն բացատրականը կարող է մեկնարանվել տեղի և էրման իմաստներով: Օրինակ՝ Յառնեմ ի գերեզմանացն (ՆՄԺԱՎ, 269):

Որքեմն բացատրականը կարող է մեկնարանվել և՛ տեղի, և՛ անշատման իմաստով: Օրինակ՝ Վերու, այլ ընդ այն շինէ, որ կարի ձայնիկդ յակեցէս (ՆՔԶԿ, 161):

Կրացումը կարող է մեկնարանվել և՛ իրբն բացատրական (տեղի), և՛ գոյականի լրացում (սեռական): Օրինակ՝ Զուր Յորգանանու բերեմ ու չրեմ որ արմատանայ (ՆՔԶԿ, 95):

Որքեմն բացատրականը կարող է մեկնարանվել տեղի և միջոցի իմաստով: Օրինակ՝ (ոչն ի յայն դէմէն կենէ, ուր քրիստոնէն յազօթս կու կենայ (ՆՔԶԿ, 308):

Տեղի բացատրականը կարող է արտահայտել տեղի գործիականի իմաստ: Օրինակ՝ Իմ եարի զընէն անցնէք, պահի մի հոն արգիլեցէք (ՆՔԶԿ, 182):

Կրացումը կարող է դիտվել և՛ տեղի բացատրական, և՛ ուղեորութիւն տրական: Օրինակ՝ Այլի, անհաստատ այլի, հա կերքամ ծովու ծարաված (ՆՔԶԿ, 148):

Որքեմն բայի լրացումը կարող է մեկնարանվել և՛ իրբն տեղի բացատրական, և՛ իրբն ի + տեղական կառույց: Օրինակ՝ Գեմ շատ հարեղայ, երկց ի նամփուն ես մոլորցուցեր (ՆՔԶԿ, 66):

Որքեմն բացատրականով լրացումը արտահայտում է տեղի-սահմանափակման իմաստ:

Օրինակներ՝ Անշափ տի գոլմ զքեզ, յուր մի աշերոցդ պագ մի տաս (ՆՔԶԿ, 117): Պագն երեւեղ տաւր ես (ն. տ., 160):

Ժամանակի բացատրական.— Սա գործողութիւն կատարման սկզբնական է ցույց տալիս: Այսպիսի լրացում կարող են ստանալ տարբեր խմբերի բայեր, ինչպես՝ սանլ, խրաւել, բռնել, ունենալ, սիրել, մեղանշել և այլն:

Օրինակներ՝ Նոպայն յերեկոյն բռնէ (ՄԶՁՄ, 96): Նրուաղեմայ եպիսկոպոսն ի ննոյ սովորութեամբ հարկուրած էր (ՍԳԳ, 36): Ոչ խրատաց զիս ի աղայութենէս ի կամս աստուծոյ (ՆՄԺԱՎ, 14): Յառաց քան զամուսնանալն ի մօրէն ունի (ն. տ., 242): Յիսկզբանէ աշխարհիս

սուզն և զորամտօթին Եկն բաժին մարդկան (ն. տ., 283): Երբ դոն ինձ հետ սեր չունիր է՞ր շափթ ի յառաջի օրէն (նժՔԿ, 174): Ի՞մ մանկութեն սիրած, մի կինար հետ ինձ նենդար (ն. տ., 179): Ի սկզբանէ սասանայ մեղանչեցաւ (ն. տ., 431): Ի՞մ կարս աչ ի մերն եկաւ վաղորդն օր խիստ մթնթափ (ն. տ., 91): Վաղորն քնից վեր ելայ, թէ Երթամ ի՞մ կարն ի բարն (ն. տ., 94):

Ժամանակի բացառական երբեմն զուգակցում է մինչ (մինչև) + հայցական կառուցքին կամ միայն հայցականին:

Օրինակներ՝ Վաղորն մինչ իրիկուն ի երեւոյ ի վեր հայլի (նժՔԿ, 101): Միրն աչայ աղչիկ, կու ձկն պաղիկն օրմէն օր (ն. տ., 130): Ակի բացառական.— Բացառականի այս իմաստը մեծ մասամբ զուգակցում է տեղի իմաստին:

Օրինակներ՝ Մի յանմեղաց զքեզ դատել (ՅԳ, 267): Ի իմնէ տուն կու Բակ (ն. տ., 295): Յորժամ քան բունէ այն անգամէ՞ն նոս զայն անգամն ի վերէն կապէ (ԱՌԲ, 166): Կատարեալ իմաստութիւն մարդոց այն է՝ սիրել զաստուած յամենայն օրա՞ (նժԺԱՎ, 267): Առ ալքն ոչ ասեմ, այլ ամէն զօրութենէ սրանն ի սրտիս (ն. տ., 159): Գեա, ի՞մ հոգոյս հոյի, ի՞մ օրա՞ սիրմ սրտիս (նժՔԿ, 158): Ոճերնոյ զու հանց ունիս, որ Շիրազն ի իմնէ Բակ (ն. տ., 76): Ո՞վ բեզըն զլարն ի բարբոն է ի սուրբ օրա՞ սիրէ զաստուած (ՄԺ, 2, 205):

Հիմունքի բացառական.— Այսպիսի լրացում ստանում են ինչպէս իմացական, այնպէս էլ ուրիշ իմաստի բայեր, ինչպէս՝ ճանաչել, կոչել, տիրել և այլն:

Օրինակներ՝ Գիտացիր, որ կաղալն մէկ ոտիցն ի զլսոյն ճանչիլի (ՔԶ, 96): Մա՛հ բեզ տիրէ յա՛հեզ ճրամանէն (ՀԵ, 192): Ու այդ երեք անուանէլ զմարդն ճանաչես (ն. տ., 190): Յի՞մ առամանցն զբոյզ ցիտացի (նժԺԱՎ, 62): Կուցաւ սայ ի թժականիս Հայոց Ջիթ, ի խնդրոյ պատականիս և սուրբ կրօնարարի Յոհանիս (ԺԵԶԶԲ, 450): Ու աստուծոյ պատկերէլ զաստուած ճանաչես (ՀԵ, 190):

Պատճառի բացառական.— Այսպիսի լրացում ստանում են տարբեր իմաստային խմբերի բայեր, ինչպէս՝ զնայ, հասել, դրոպ, կարգաւ, երկնչել, բնծայիկ, քերել, մտանել և այլն:

Օրինակներ՝ Յաղագս, որ շատ հայծնացն հստի և զօրովին ի ծալ պա՛հէ (ՔԶ, 158): Ընծայի այս չեքմս հոգոյ կենդանութենէ (ՄՇԶՄ, 22): Ի մտութենէ զայս չեքմս յերևան է բերել (ն. տ., 27): Անէն կարպեալ լեղորս (ԳԱՏ, 167): Ի վայտում ոչ խօսեցաւ (ն. տ., 186): Առաւել աղհատութենէն մարդ շերբար ի տուն նորա (ն. տ., 187): Կառեղան ի

պիղծ յարչնէ (ՔԶ, 95): Խորշիկն լինի ի սրտին վառուձութենէն (ն. տ., 96): Յիբապի մեռանիս ի սովուն (նժԺԱՎ, 20): Ի ազգմանէ շարին սասանայի սրեաց աղչիկ մի (ն. տ., 40): Ի յազգմանէ զատարոյն Քրիստոսի խրատն եղիկնքն (ն. տ., 12): Ոչ կարէր երբալ ի բազում զբաղանցն (ն. տ., 210): Սովուն շեմ կարեւ Բայիկ, նա կասեն թէ զաս մէկ կերնք (նժՔԿ, 195): Աղուոր, քեզ բան մի կասեմ, հօրդ անուն չեմ իշխեր սակ (ն. տ., 210):

Բացառականը կարող է մեկնարանով և՛ պատճառի, և՛ պատսիվ ներգործութեան իմաստներով:

Օրինակներ՝ Չի կարօտս նորա մեռանիմ առաւն (ԽԿ, 134): Ի տրամութենէն Բուն տարաւ պա՛հ մի (նժԺԱՎ, 159):

Բացառականը կարող է մեկնարանով և՛ պատճառի և ձևի իմաստներով, Օրինակ՝ Սարդն ի բնութենէ հինէ զմարմն (նժԺԱՎ, 261):

Երբեմն բայի լրացումը կարող է մեկնարանով և՛ իրեն պատճառի բացառական, և՛ իրեն պատճառի սրական:

Օրինակներ՝ Շատ մարդ է մեռել սիրով, կու վախի՞մ, թէ մեռնիմ ես այս (նժՔԿ, 135): Պլպուզն ալ վարդին սիրուն զայն փշինն զա՛հրն կու Բաշէ (ն. տ., 190): Թէ՛ մարդ ես, նայ սերտ և անխնայ զարկ դու և հար զթիկունս ի՞մ, դի այս խելացս աչպէս վայելէ ինձ (նժԺԱՎ, 112): Կարթիկ մ՝ արհնիկ ունիմ, քո սիրով ան ալ ցամաքել (նժՔԿ, 246): Երեսս զուն չեմ բերի՞ն՝ անտորս այս հայս եմ բնիկ (ն. տ., 177):

Կառուակի բացառական.— Սա զբարբալան գլ-բացառական կատուցի փոխարեն է զործածվում: Օրինակ՝ Ձեռն տունն ի բունն եկի, զքեզ տեսայ՝ բանս մտացայ (նժՔԿ, 89):

Երբեմն լրացումը կարող է մեկնարանով կա՛մ իրեն շափի բացառական, կա՛մ իրեն ի+տակա՛ն՝ շափի իմաստով, Օրինակ՝ Ի մի քար-խելոյն է՛ն զիր գրեցի, բայց կաթաւ թանտրն, թէ չէ այլ կու զրէի (ԺԵԶԶԱ, 456):

Գ. ՔԱՅԻ ԼՐԱՅԻՆՈՒՄԵՐ ԿՐԹՈՒՄԵՆ ԶՈՒԹՈՒՄ

Միջին հայերենում զործիական հոլովը իմաստային ալիկի լայն ընդգրկում ունի, բան զբարբալում է, Բունն այն է, որ զործիականն արտահայտում է ոչ միայն զբարբալան նույն հոլովի, այլև գլ+գործիական կատուցի իմաստները:

Այստեղ ես խնդրային իմաստներն թվով պակաս են պարագայականներին:

Գործիականի խնդրային իմաստներն են միջոցի, նյութի, ներգոր-

ծոյ խնդրի, սահմանափակման, փոխարինութեան: Պարագայական իմաստներն են ձեր, վիճակի, համապատասխանութեան, միասնութեան, աղիք, ժամանակի, հիմունքի, նպատակի, չափի, սաստկացման:

Այս հորոքը ևս կարող է մեկնարանվել մեկից ավելի իմաստներով՝ նույն լրացչայի մաս:

ա. Բայի լրացումները խնդրային գործիականով

Միջոցի գործիական.— Սա գործողութեան կատարման միջոցն է ցույց տալիս և դառնում է տարրեր իմաստային խմբերի պատկանող բայերի լրացում, ինչպես՝ անցանել, տալ, պաշարել, սպանանել, շտատնալ, յագնալ, Էյանել, խնդալ, պատասխանի անել, խորել և այլն:

Օրինակներ՝ Չարակամութեամբ սպանանեն զիղօ (ՄԳԳ, 145); Բոյան ի գետնէն Էյանել չրով (ԱՕԲ, 21); Չևք տեսովը ե՞ք մեք խնդացել (ՉԵ, 147); Շահն պատասխանի Էր առաւելով բէկովն (ՊԱԳ, 219); Իրեզական ոմն անցանէր իշով միով ի փոզողէ իմեթէ (ԱՄՄԲ, 326); Բարակ ազամ խորէն ի առչդուխն (ԲԶ, 138); Միձաղին սար ու ձոր ձաղիօ (ՄԸԲ, 222); Երկու իօօ գիս դարմանեաց (ՉԵ, 179):

Ելուրի գործիական.— Լրացումը ցույց է տալիս գործողութեան կատարման Ելուրը: Այսպիսի լրացում կարող են ստանալ տարրեր խմբերի բայեր, ինչպես՝ գարջարել, խտանալ, ձեփնլ, լնուլ, ենելել, կազմել, շինել և այլն:

Օրինակներ՝ Մնիլ գտան և զձեռո այս չրովս (ՄԸՄԲ, 68); Արեամբ Ես ենելալ (ՆՄԺԱՎ, 93); Քաղաւորք և իշխանք և պարոնայք կազմեն զիս ոսկով և արծարով և բազմին ի վերայ իմ (Ն. ա., 151); Ելից գրողը մի յարգով մինչև ի ճիտն (Ն. ա., 253); Զհորն Բարով լցին (Ն. ա., 314); Գու արժ զինք կասալ խտով (ԲԶ, 108); Քէ անեն զիս ու խանին շահով խտնին այն հարմարն (ԿԵՏ, 148):

Մի շարք բայերի մաս գործիականը կարող է մեկնարանվել նյութի և միջոցի խտն իմաստներով:

Օրինակներ՝ Յայտնք Լիլ չրով (ՄԸՄԲ, 68); Զի չրով մաքեցին մեզքն ազամային (ՉԵ, 194); Յագնացան ամենեքեան արեամբ և գանձի (ՄՈԲԺ, 373):

Ներգործող խնդրի գործիական.— Սա լրացում է դառնում կրավորական սեռի բայերի համար:

Օրինակներ՝ Ոչ ով էլ պայծառ եղբր, չիմ ալլոք ձեռօ ևս խարոնք (ՆՔԶ, 303); Որք զրկած են անդից՝ տանչին խաւարով (ՉԵ, 187): Ի

զօրիոցն ի յահէն Բէնով ազալիմ... Քէ հարուստ Էմ 'ս լսով' Բէնով խտով (Ն. ա., 197):

Երբեմն գործիականը կարող է մեկնարանվել ներգործող խնդրի և միջոցի իմաստներով:

Օրինակներ՝ Քափի ի բէն խորին հին շար գործոց շնորհօ սուրբ հուրցն (ՆՄԺԱՎ, 262); Լուսաւորի հոգի քո կրկին լուսով սուրբ աազանին (Ն. ա., 263):

Մանմանափակման գործիական.— Սա լրացում է դառնում ինչպես անփակնական ծագմամբ, այնպես էլ ուրիշ բայերի համար:

Օրինակներ՝ Հաւատով և գործով ի բազմաց բաժանեալ եմ (ՄԳԳ, 22); Նորս ևս պատով են գանգանած (Ն. ա., 40); Եւ հոգով ու մարմնով ևս անմահանամ (ՅԳ, 443); Գործով երկի խելօրն, սակիով շաղրի մշակ (Ն. ա., 368); Չուզով ճիւղեղացեալն նովա բոշկի (ԱԲ, 248); Գեր-ձակ ոմն այնքան վարժեցալ Էր զոգութեամբ (ԷՄԳԱ, 328); Կաղէր Բ ոսիւմ (ՆՄԺԱՎ, 282); Չարչարիմ մարմնով և շարգարանամ հոգով (Ն. ա., 274); Կարես փարքամանալ զու հոգով (Ն. ա., 108); Գու ևս բան զևս ալքատանաս հոգով (Ն. ա., 109); Այսպէս են կապեալ յատուած հաւատով և են կապեալ ի ստուանայ շար գործով (Ն. ա., 83):

Փոխարինողայն գործիական.— Սա լրացում է լինում սահմանափակ թշուղ բայերի համար, ինչպես՝ ցնիլ, վանտել, առնուլ, ապլ և այլն: Օրինակներ՝ Զարիեզ զէտ շուր վաթէ, դառնայ մէկ խօսօօ վնարէ (ՆՔԶ, 269); Ես քս ծառայ, արևամբ զնամ (ՉԵ, 174); Այստեղ հնարագոր է գործիականը մեկնարանել նաև միջոցի իմաստով:

Պարառական կամ հանգման գործիական.— Սա գրարարյան զ+ գործիական կառույցի փոխարեն է գործածվում:

Օրինակներ՝ Զափարն երեսօխ էամ, թէ՛ սկանակ մեղնալ; ցորեկով (ՆՔԶ, 122); Զինուօ վազեց նա զեփրատով՝ Զքաննրուօ կանչնոյ շափով (ԱՄՄԲ, 373); Զայնիկն ակննովս ընկաւ, շի դազրբր այնքս ի լույս (ՆՔԶ, 221); Զաստուած մտօքն ձգեաց (ՆՄԺԱՎ, 186):

բ. Բայի լրացումները պարագայական գործիականով

Անի գործիական.— Զնի գործիականը առաջին հերթին կարող է հանդես գալ միայնակ:

Օրինակներ՝ Կարգեցին առաքեալն և եղին հաստատութեամբ, ԼԹԵ մի սք անարգեցէ (ՄԳԳ, 49); Գրով և վկայիօ վանառիցեն (Ն. ա., 127):

Օրենսդրեամբ բաժնէ յիւրմէ (ն. ա., 59): Գործով երկի խելօքն, ասելովն չապրի մշակ (ՅԳ, 368): Անասունք և գազանք եւամով խաշտան (եԿ, 136): Երկիր հիմամբ սասանի (ՆԵ, 245): Գնամ առ նա սուզօրեամբ (ՊԱԳ, 130): Ավ որ սուզօրե չամբարէ՞ խնդով անցնէ, զրօղը տարին (ՀԹՏ, 121): Քէ այս վարուս զու կենաւ, ի յանուանէ զու շուս կորչիս (ՅԳ, 270): Որով յայանի նապարակաւ ի շուս ամենեցուն (նՄԺԱՎ, 242): Աշխոհս գծն տարին անցուց ոտելով և խմելով (ն. ա., 178): Տակ զարևուն քարին, հաւաքով զրեկ կու տեսնէ (ՆԺԷԿ, 76): Լաւ մարդ եւ նորս ասեմ, որ բանայ զերբանն համով (ն. ա., 265):

Գործիականը ձեռի իմաստ կարող է արասնայտել նաև իր անմիջական լրացմամբ հանդիման:

Օրինակներ՝ Զամէն մարդ իր գլխովն սպանեն (ՍԳԳ, 60): Ենք վկայով՝ զրէ ապ զիր իբրն (ն. ա., 65): Առայ թէ իր կամօք վնասէ, նա մեղով (ն. ա., 71): Ծառ աշխատանօք զայս զիրքս բարգամանցի (ԱՕԲ, 215): Ամենայն հարցումսոց տեղէ զլատասխանի կարգաւոր խօսիւք (ՊԱԳ, 112): Կարիւղ կենօք շրջիմ եւ (ԳԱՏ, 156): Խաւար կենօք կենան (ԿԵՏ, 130):

Շատ զկայքերում զործիականը կառող է մեկնաբանվել միջոցի և ձեռի իմաստներով:

Օրինակներ՝ Յկատունոյ իրատունս կաշառօք կու ծախէ (ՍԳԳ, 21): Զնդանով և աչցեղ շաշարանօք ասնջին (ն. ա., 35): Զայս Մոսխես հրաւամբաջ Ասատունոյ բերանով (ն. ա., 55): Երբ զնէ որ վկայք և հաստատու բխավ (ն. ա., 63): Զորս հատենեցոյ զնոսա խելօքն իւր (ՍՄՊՑ, 98): Ըղպատնտան այս բանիս մտօք զու Ընենա (ՆԵ, 192): Փագաւորն քնդուէր զամենեանս զխաղէ և անցեալ նստէին ամենեքեան (ԱՄՆՄՇ, 252): Այսպէս ազատեցաւ մարդն ի մահուանէ խրատով սարդին (նՄԺԱՎ, 163): Այսօք-անօք գրուցն յայտենմ (ՀՇՄԲԲ, 445):

Վիճակի զործիական.— Սա ցույց է տալիս և՛ զործողի, և՛ զործողութեան ասարկայի միճակը: Լրացումը կարող է լինել միայնակ կամ ունենալ անբաժան լրացում:

Օրինակներ՝ Բագում աշխատանք աշխատեցայ ի դասատուանցիրս ձեւացեալ մտօք (ՍԳԳ, 15): Մեռանքիմ մեղօք (էՇՄԳԱ, 98): Օր ատօք փառօք տեսանէին զնա (ՍՄՊՑ, 51): Ցնտ և տարտիս գայ այրիին ու գտնու կնիկն պակով քնդ ալի ալր (ՍԳԳ, 50): Աւաղ թէ մեռանքիմ պարտօ և շրջի պարտքս վճարած (ՅԳ, 388): Անմեղ ի յաշխարհս եկի Ն: մեղօք կերամ սեղեւս (ն. ա., 522): Ի Կոստանդնուպոլիս և յայլ բազում քաղաք մնացին զգակով (ՊԱԳ, 568): Քէ լինէր, որ զքեզ տեսի առ

յիս զալով (ԿԵՏ, 167): Տեսան զնա այնպէս ձնովն քաղաքն ամենայն (նՄԺԱՎ, 51): Ցէ՞ք կու պանես զարչիս լալով (ՀՄԲ, 83): Երբ որ շէկի պարզ երեսօք ի յարբայութիանս աստուծոյ, այժմ էլ սե երեսօք ի գծիքն (նՄԺԱՎ, 179): Ես տկար և ձեւ անձամբ և պաղտոյտ կենօք զեցի զուրք Աւետարանս (ԺՆՇՇԸԲ, 296): Բագում աշխատեցայ ի տուն սուպի ևս ցրտովս (ԺՆՇՇԸԳ, 484): Քանի՞ ու քանի՞ տեսմ՝ մի կենար զու խամ յարեոք (նՄԷԿ, 89): Երթամ պատմեն Ազամայ, թէ զՔրիստոս մարմնով ևս տեսայ (ն. ա., 310):

Երբեմն զործիականը կարող է մեկնաբանվել միճակի և ձեռի իմաստներով:

Օրինակներ՝ Տէրն յամբօք էլ ի դատօրէն անիրաւ (նՄԺԱՎ, 12): Քանի՞ տեսն տնով կենանէ, ու զողանք, թէ ինչ կու լինի (նՄԷԿ, 206): Համապատասխանօրէյան զործիական.— Սա մտտ է ձեռի զործիականին (Իբրև նախադասութեան անշամ, ձեռի պարզաւ է): Այսպիսի լրացում սասանում են տարբեր խմբերի բայեր, ինչպէս՝ առնել, պանել, արբուցանել, մկրանել, զարնուցանել և այլն:

Օրինակներ՝ Կարէ օրինօք քանանայ մկրանել զյգի կին (ՍԳԳ, 54): Դատարար օրինօք զնոյն պարտիս արբուցանել անոցաւ (ն. ա., 70): Զիր վարձն շատ արժանոյն դատարարին տեսովն առնու (ն. ա., 71): Մի խղեր զՆուցն սահմանած սինտոն քո սինտո կցերսն, բայց քո ըզօրդութեամբ պանէ իրանօք (ն. ա., 72):

Միասնօրէյան զործիական.— Ինչպիս ասվել է մասնակակից հայերենի բառակազմակերպութեան շնորհիւ զմասնութեան կապակցութեամբ՝ միասնութեան զործիականը շուտ ենթատեսակ օճի՝ բուն միասնութեան, աստրկաչական միասնութեան, ենթակաչական-միասնութեան, խղարտի-միասնութեան, որոնցից ասայինք և երրորդը խնդիր են, մշտաները՝ պարզաւ:

1. Բուն միասնօրէյան զործիական.— Լրացումը այն ասարկան է ցույց տալիս, որի հետ միասին ենթական զործողութեան է կատարում: Այս զեղբում աստղան ենթակաչի հետ միասնարար զործողութեան մասնակից է: Սա մեծ մասամբ անձ ցույց տվող բառ է լինում: Լրացումը գտնուում են տարբեր խմբերի բայեր:

Օրինակներ՝ Չէ իրատեք, որ թագաւորն անպակ սիրողով կենայ (ՍԳԳ, 17): Եւ զիշխանք դաւալ իշխանաց իշխանն՝ իշխանօք և իբնց

1 Ցէս մեր տճամանակից Հայերենի բառակազմակերպութեանը, Երևան, 1975.

տեսովն (ն. ա., 47): Չագոֆ հանրոտ կենն պարին (46Տ, 119): Սուրբ քնկերոցն իր ի Հայոս դիմաց (ԳԱՏ, 144): Քաղաւոր ոմն զճայր գորօֆ զճանապարհոս իւր (էՀՄԳՄ, 125): Երեւալ քնկերօքն կրօնաւորեցաւ (ՆՄԺԱՎ, 303): Տէրն Մօսուաց շատ Արարացօֆ զճաց ի վրան նոցա (ՍՄՊՅ, 48): Երկու աշնն կողմով ի զուրօ վազկաց (ՆՄԺԱՎ, 55):

2. Առաւիպական-միասնութեան գործիական. — Կոստանը այն առարկան է ջրայց տալիս, որը մասնակցում է գործողութեանը պատերձութեան, ենթակալի կողմից ներգրավվելով գործողութեան մեջ:

Օրինակներ՝ երբան առ աստուած կառաւով և առ աստանայ մեղօֆ և հեշտահորութեամբ (ՆՄԺԱՎ, 53): Կին մի երբայր յերուսաղեմ բազում զբորք և բազում քնչիւֆ (ն. ա., 212): Եսաս առաւ: մտան ի բազաքն (ՍՄՊՅ, 47): Քաղեմ զոյնզօյն ծաղկունք, խնձուրով մտնեմ դէպ ի քնզ (ՆՔԶԿ, 117): Նորա այսու բարի գարծով յերկինս վերացան (2Ն, 201):

Երբեմն գործիականը կարող է մեկնաբանվել և առարկայական-միասնութեան, և՛ վիճակի իմաստներով: Օրինակ՝ Արկանեն ուրար և թիկնոց շուրջառով կլանեն ի բեմն (ՍԳԳ, 40):

Նույն նախադասութեան մեջ հնարավոր է բուն միասնութեան և առարկայական-միասնութեան գործիականների համատեղ գործածութեան: Օրինակ՝ Եղի շարձ և Երկնայ բաղաքն Բ. զեղով քնկղմեցաւ մարդով և անասնօֆ (ԺՆԶԶԳ, 37):

3. Երեւակայական-միասնութեան գործիական. — Սա ջուլց է տալիս այն անձանց (կամ առարկաների) ամբողջութեանը, որոնք համատեղ որևէ գործողութեան են կատարում: Իրականում գործիականը կիսով չափ է լրացում:

Օրինակներ՝ Հանց խորտակէ Աստուած զնա, Որ իւր ազգովն ամէն չնչին (ՅԳ, 425): Պատեղէ անձալ շուրջանակի նստան ի վերայ բուրբ բանակի ամօք և ամսօք (ՍՊՊՍ, 404):

4. Խնդրային-միասնութեան գործիական. — Լրացումը ջրայց է տալիս այն առարկան, որը խնդրի հետ միասին կրում է գործողութեանը:

Օրինակներ՝ Չհացն կարարքն ոտէ (ՄՀՅՄ, 56): Վարդի ձէթ աղի Բացախով (ն. ա., 67): Հին վարդ մօրապայ տուր մազաախով և պղպեղով (ԱՌԲ, 106): Իու սուր հուտ ձաղով շրվալս, ազրխի ջրով և նսան հատով տուր (ն. ա., 127): Հազրի ճեռով զխաշխշին կեղնն եփի (ն. ա., 235): Դաճուցանէին զկաթողիկոսն և զԳազաւորն մեծամեծօք յաշխարհն իւրեանց մեծաւ պատուով (ՍՄՊՅ, 2): Քակեաց գրանդն, որ է զժողիքն, և զկեղամ իւր ծնեղխալն ազանեաց (ՆՄԺԱՎ, 2): Որ մի զխաթան մի բաղեցին շատ քնչիւֆ (ն. ա., 217): Քաղաւորն սոճամայն ետ

նոցա երկօցանցն մէկ ձի սարօքն հեծնելոյ (ն. ա., 247): Ետես լեանս մի յուսեղնն զրախառն (ՆՄԺԱՎ, 169):

Երբեմն գործիականը կարող է մեկնաբանվել և՛ խնդրային-միասնութեան, և՛ վիճակի իմաստներով: Օրինակ՝ Բերէ անուշահոտ տեղես զեղեցիկ՝ զվարդն տերեղովն (ՆՄԺԱՎ, 104):

Կարող են համատեղվել խնդրային միասնութեան և ձեռն իմաստներ: Օրինակ՝ Նաքրայիքն կանամբքն խառնովանէին (ՍԳԳ, 21):

Երբեմն գործիականը կարող է մեկնաբանվել և՛ իրրե բայի լրացում խնդրային միասնութեան իմաստով, և՛ իրրե դոյակակի լրացում: Օրինակ՝ եւ ետու զուրբ Անուսարանս սակի խաչով և արժաթ ոստերեղով և կոնխով և նշիտն տիպով և Ը. շորով (ԺՆԶԶԳ, 99):

Տեղի գործիական. — Միջին հայերենում տեղի գործիականը ավելի շատ է գործածվում, քան գրաբարում: Պատճառն այն է, որ այստեղ գործիականն աղտահարյալում է նաև գրաբարյան գլ+գործիական կառույցի (պարստական) իմաստ:

Օրինակներ՝ Երբայ իւր նամբովն (ՍԳԳ, 69): Ոչ կարէին օսմանցոց աշխարհան զճալ (ՊԱԳ, 185): Եմուտ ի նաս և ձովով զճաց ի Կոստանդնուպօլիս (ն. ա., 334): Երկիցս անգամ անցանի աշխարհս ջրով և հրով (ՎԱՊՅ, 11): Այն մարդն դատաւորին դրնով անցանէր (ՆՄԺԱՎ, 254): Արևի գեռնզերովն անցիր (ն. ա., 318): Մասնաբօս ի վար կողի ծառու մուս հողաց սոխախով (ՆՔԶԿ, 110): Մի՛ դար մեզ դոնովն անցիր (ն. ա., 156): Քանի սարեւով կերաս, օր մի տի յիմ ախ բնիկիս (ն. ա., 235): Կէսն սարեւովն զան (4ՆՏ, 153): Լուսամուտովն անձրնն զգիրս զճեց (ԺՆԶԶԳ, 168): Սուղմանն անցալ միսս կողմով ձովուն և զանցեալ եհաս յերկիրն Գաւաշից (ն. ա., 173): Եկեալ նստան և մեծնացան Բազախովն և Երկրովն (ն. ա., 256):

Երբեմն գործիականը գործածվում է այլ հոլովանների կամ կառույցների փոխարեն: Օրինակ՝ Երկու մարդ վիճելին ճանապարհով որ երթային (ՆՄԺԱՎ, 168):

Ժամանակի գործիական. — Լրացումը ջրայց է տալիս գործողութեան կատարման ընդհանուր ժամանակը: Այսպիսի լրացում ստանում են առարկան իմաստային խմբերի բայեր:

Օրինակներ՝ Հանցեղ զեղեցիկ զարդարած նոր հարսն զիջեղով ի թաղոց ի թաղ երբայ և ի յետ գայ (ՆՄԺԱՎ, 204): Երկի ցրեկով բարով սանելին մէկ Էսար մի ճորով (ՆՔԶԿ, 53): Անովով ձին ո՞վ է տեսել, որ կուգայ ի մանուկ մարդուն (ն. ա., 56): Խոջ Էարիկ, կարէ՛ս գիտնել զո՞ն զիմ զալ բեղ զիջեղով (ն. ա., 114):

Չափի գործիական.— Սա կարող է ցույց տալ գործողութան կատարման ժամանակային, քանակական, ծավալային և այլ կարգի շափը: Գործիականը կարող է լինել միանակ կամ բնական և այլ խոսքի մասով արտահայտված լրացումով:

Օրինակներ՝ Պաննեղ երկար ժամանակալ գիտաբան մեր գլեհն (ՍՄՊՑ, 124): Այլ ծերացեալ էր և պարագայով բազում ժամանակալ (Ն. հ., 43): Եթէ յայդի մտնես, որ բոլ է նա դու փորովի կեր, քեզ հալալ է (ՍԳԿ, 78): Եկի, գրեզ ի բուն գուայ, պազ առի հագար համարով (ՆԲԶԿ, 114):

Կարող են համատեղվել շափի և ժամանակի իմաստները: Օրինակներ՝ Մի տար գայն, որ աւարովն է ցանած (ԲԶ, 75): Եւ այնպէս ժամանակալ ինչ սիրով խաղային առ լիրար (ՆՄԺԱՎ, 227):

Սասակցման գործիական.— Ինչպէս հայտնի է, առ մտտ է ձևի և շափի գործիականներին: Սովորաբար լրացումը և լրացալը նույնիմաստ բառեր են լինում, բնոց որում լրացումը կարող է լինել գոյական կամ անորոշ դերբայ:

